ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղանակ

11-12

(218-219) Նոյեմբեր-դեկտեմբեր 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

Նոյեմբերի 15-ին ՀԳՄ Մեծ դահլիճում հանդիսությամբ նշվեց Հայաստանի գրողների միության 90-ամյակը: Այն սկսվեց Հրանտ Մաթևոսյանի «Սպիտակ թղթի առջև» հոդվածի ընթերցմամբ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը: Նա անդրադարձավ Գրողների միության 90-ամյա պատմության կարևոր իրադարձություններին՝ նշելով նրա ունեցած մեծ դերը հայ գրականության ու մշակույթի զարգացման ընթացքում: Փաստաբան Լևոն Բաղդասարյանը խոսեց ՀԳՄ շենքի սեփականաշնորհման խնդրի մասին: Ելույթ ունեցան Արցախի գրողների միության նախագահ, և այժմ՝ ՀԳՄ քարտուղար Նորեկ Գասպարյանը, գրականագետ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, դրամատուրգ, «Գրական թերթ»-ի խմբագիր Կարինե Խոդիկյանը, սիրիահայ բանաստեղծ Տիգրան Գաբոյեանը, իրանահայ գրողների միության նախագահ Թորգոմ Հակոբյանը և երիտասարդ բանաստեղծ Հայկ Սիրունյանը:

Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» և Վահագն Դավթյանի «Անանձնական» բանաստեղծությունների խոսքերով գրված իր երգերը կատարեց ՀՀ ժողովրդական արտիստ Ռոբերտ Ամիրխանյանը: Գուրգեն Մահարու, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի և Վիլյամ Սարոյանի ստեղծագործություններն ընթերցեց ՀՀ վաստակավոր արտիստ Սիլվա Յուզբաշյանը: Կոմիտասի «Հայաստան» ստեղծագործությունը՝ Լևոն Հարությունյանի նվագակցությամբ կատարեց Արտակ Ստեփանյանը: Ավ. Իսահակյանի «Շուշան աղջիկ» ստեղծագործությունը՝ Նիկոլ Գալանտերյանի երաժշտությամբ և Մարգարիտա Սարգսյանի մշակմամբ կատարեցին Աննա Պողոսյանը և Դիանա Հարությունյանը: Պարույր Սևակի խոսքերով և Ալեքսեյ Հեքիմյանի երաժշտությամբ «Իմ Հայաստան» ստեղծագործությունը կատարեց Արամ Խաչատրյանը: Նվագակցում էր Մարգարիտա Սարգսյանը: Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ ՀԳՄ Սուրեն Քոչարյանի անվան պոեզիայի և ասմունքի թատրոնը՝ Սամվել Բաղինյանի ղեկավարությամբ: Եղիշե Չարենցի, Սիլվա Կապուտիկյանի, Զահրատի և Ակսել Բակունցի ստեղծագործությունները հնչեցին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դերասաններ Սամվել Բաղինյանի, Դավիթ Գասպարյանի, Արամ Կոստանյանի, Արմեն Քուշկյանի և Ռուզաննա Հախնազարյանի ընթերցմամբ:

Հանդիսությունը վարում էր **Ռուզաննա Հախնազարյանը:**

ՆՈՐ ԱՐԵՇԻ ՎԻՊԱՍՔԸ

Մի քիչ անսովոր է մեր իրականության մեջ, որ գրքի հրատարակումից առաջ ներկայացնում ենք գրախոսությունը՝ սրանով իսկ ընթերցողին տրամադրելով գալիք հաճելի ընթերցանության:

Տարիներ առաջ՝ հայրենակիցների հետ մի հանդիպման ժամանակ, ոգևորված Նոր Արեշում բնակություն հաստատած հայրենադարձների բուռն խանդավառությամբ և արարչական ոգևորությամբ, Վեհափառ Հայրապետը գրել է. «Հուզիչ և ոգևորիչ է հերոսական պատմությունը հայրենիք վերադարձած շինարար հայի: Այդ պատմությունն սպասում է իր վիպասանին…» (գրքի բնաբանը՝ «Բացի՛ր աչքերդ, հա՛յ ժողովուրդ», խորագիրը՝ «Վազգեն Առաջին», էջ 167):

Այդ եզերքում՝ կոլորիտային անկրկնելի մի միջավայրում էր անցել և անցնում է Ալիս Հովհաննիսյանի պատանեկությունն ու ստեղծագործական անդադրում կյանքը՝ ամբարելով նորանոր տպավորություններ, հուշեր ու նաև հարաճուն պատասխանատվության անմեկնելի մի զգացում՝ արժանի լինել այդ պարզուկ ու սքանչելի, պատվախնդիր մարդկանց մասին վիպելուն, որոնց Մեծ եղեռնը զրկել էր հայրենի հողից ու հասցրել 40-ական թվականների հետպատերազմյան անբարեշեն Հայաստան, որի հեռավոր ծայրամասերում սկիզբ առավ նոր կյանքը:

Ժամանակակից հայ արձակի նշանավոր դեմքերից է Ալիս Հովհաննիսյանը, նաև ուշագրավ հրապարակախոս, բանասիրական և կինոգիտական արժեքավոր հոդվածների հեղինակ: Նրա՝ ներկայացվող «Աղաների դարը և հետոն» վեպը հավասարապես պատասխան է մեր այսօրվա տագնապախառով օրերին և յուրատեսակ հիշատակի տուրք հայրենի միջավայրին՝ Նոր Արեշի մի քանի փողոցների գեղարվեստական ասքը՝ մեծ սիրով ու կարոտով թաթավուն: Յոթ տասնամյակների կոլորիտային պատումը՝ բարի հումորով ու լույսով շաղախված, պատմում է երեք սերունդների մասին, ովքեր անմեկին սիրով փարվեցին այն հեռավոր ծայրամասային անապատին, որ առանձնացրել էին իրենց համար իբրև ավան-բնակատեղի: Նոր եզերքում հայտնված հայորդիները փորձեցին վերականգնել կամ գուցեև ստեղծել «աղայական» ու «հանըմական» «իրավունքները» հավատով կամ համոզված իրենց արժանիքների մեջ: Կար ժամանակ, որ «ամեն տուն իր աղան ուներ, նույնիսկ էֆենդի էլ կար»:

…Ծանր ժամանակներ էին, երկրում սով էր, ստալինյան բռնությունների հերթական բռնկումն էր՝ այս անգամ նախկին ռազմագերիների, նաև հայրենադարձների, հատկապես մտավորական խավի նկատմամբ: Այսօր՝ տասնամյակների հեռվից, առնվազն տարօրինակ է թվում ներգաղթածների նկատմամբ պահվածքը, որ առաջին օրերից պատրանաթափ արեց բոլորին. «….արդեն չեմ վրդովուիր որ կը զարմանա՝ ինչո՞ւ եկած ենք «ախպարներս», մի՞թե վատ էինք ապրում: Իսկ իրենք արդէն իսկ վատ են ապրում այստեղ, կը տեսնեմ՝ շատ վատ, բայց վա՜խը մանավանդ, թաքուն վա՜խը բոլորին մէջ»: Շատ տարօրինակ էր ստացվում. հայրենադարձներս, դրսից եկած մեր հայացքով ավելի ճշմարիտ, ավելի հստակ էինք տեսնում ինչը ինչոց է, քան իրենք՝ այստեղի մեր սերնդակիցներից եթե ոչ բոլորը, բավական շատերը, թեպետ նրանց իսկ ծնողներն ու պապերը ամենից ավելի էին տուժել ստալինիզմից…»,- գրելու էր Կ. Սուրենյանն իր օրագրային էջերից մեկում: Ի՞նչ հեռահար նպատակ ուներ այս ամենը պատերազմից նոր դուրս եկած երկրում: Աղասի Այվազյանն իր հրաշալի ինքնակենսագրական վեպում, գուցե մի փոքր թանձրացնելով գույները, գրելու էր. «Գողերի օրենքը գործող սահմանադրություն էր, ԽՍՀՄ սահմանադրությունը՝ դատարկ թուղթ: Եվ այդ մեծ պարադոքսի հեղինակը հարբեցող կոշկակարի որդի Ստալինն էր: Հենց այդ մեծ պարադոքսի կիզակետում պայթեց «հայրենադարձության», հայոց ներգաղթի աղետը: Կազմակերպիչը ամենազոր էնկավեդեն էր՝ Վրաստանի և Ադրբեջանի էնկավեդեն, նույնիսկ Թուրքիայի մատը խառն էր հայերի միամտության աննախադեպ միստերիայում: Բեմը Հայաստանն էր, ռեժիսորը՝ Բերիան: Հայի կերպարը, որը կոտորակվել էր, բազմաթիվ զանազանակերպ դրսերևույթ էր ստացել տարբեր երկրներում, իր ամբողջ խայտաբղետությամբ հավաքվեց-լցվեց մի տեղ: Պանօպտիկում էր ներկայացնում հատկապես Երևանը: 37-ի այսահար գոյությունից ու պատերազմից հազիվ դուրս ելած Հայաստանը նոր պետք է իր մի պատառ հացը ճարեր, այդ պատառի շուրջ բերանները կրկնապատկվեցին: Եվ պառակտվեց առանց այդ էլ անմիասնական, շփոթ հայությունը: Առաջացած «ախպար» հասկացությունը դանակի պես կիսեց ցեղը 2 մասի: …Հոգու երկար, քրտնաջարչար աշխատանք էր հարկավոր, որպեսզի նրանց մի մասը նմանվեր մեզ»: Կենդանի մնացած հայությունն արդեն կոփվել էր վախի, ստի, երկերեսանության, կասկածամտության, անհավատության մամլիչի ներքո: Բանաստեղծ և հրապարակախոս Հովի. Գրիգորյանը գրելու էր. «Մենք ոտից գլուխ թաղված էինք բարության, լույսի, հաջողությունների, նվաճումների, հաղթարշավների, կակաչների, վարդերի, խոխոջացող առուների, ուռաների, օվացիաների վերածվող որոտընդոստ ծափահարությունների մեջ»: Մինչդեռ սերնդի պատանեկությունն անցնում էր ծանր փորձությունների միջով, որոնց հիշատակները դեռ կրում էր հայրերի սերունդը: Ապագա գրող Հովհաննես Գրիգորյանը պատմում է, որ տան հնոտիները քրքրելիս գտել է Ստալինի ճառերից մեկի ձայնասկավառակները և հետաքրքրության համար հերթով լսել է: Մեծ է եղել զարմանքը, երբ պարզել է, որ դրանցից երկուսը ծայրից ծայր …ծափահարություններ են: Գրական անկեղծ արձագանքներ հապաղման մյուս պատճառն էլ այն վերապահ վերաբերմունքն էր, որով դիմավորեցին հայրենադարձներին պաշտոնական հայրենիքը, տեղացի հայերը: Գոյացավ մի տխուր անջրպետ, որ տեսանելի է նույնիսկ այսօր: Ահա թե ինչու «երկաթե վարագույրը» փոքրիշատե տեղաշարժվելուն պես նորարեշցին գերադասեց կրկին բռնել հարցականի ուղիները: Իր հոդվածներից մեկը Աղասի Այվազյանը վերնագրեց. «Ծովից ծով Հայաստա՞ն, թե՞ օվկիանոսից օվկիանոս հայություն…»:

… Վեպ-խճանկարում հայտնվում են թաղամասի մարդիկ, նրանց հետ էլ՝ ինքը հեղինակը: Չնայած այսօրինակ բազմաձայնությանը՝ նրանք հասցնում են տպավորվել՝ որոշակի միջադեպում ստանալով վիպական լիարժեք կյանքի իրավունք: Նրանք ստիպված են խնամքով թաքցնել իրենց զգացմունքները, բայց և ամեն ինչ անց են կացնում իրենց նախորդ կյանքի ու փորձառությունների միջով:

Մի շատ կարևոր արժանավորություն էլ ունի վեպը, որի մասին մեզանում գրեթե չի խոսվել՝ հոգեբանական գիտության նորագույն ձեռքբերումների անդրադարձը: Դա եղեռնի ու անլուր հալածանքների միջով անցած սերունդների հոգեբանական խաթարումներն են և դրանց հարատևող հետևանքները, որ հաճախ անպատեհ հայտնվելով՝ թույլ չեն տալիս ապրել լիարժեք կյանքով: Առաջին սերունդն իր մեջ կրում էր նախճիրների ականատես-վկայի բարդույթը, սակայն արդեն ապացուցման կարիք չունի անակնկալ հոգեբանական էքսցեսների երևան գալը նույնիսկ հաջորդ սերունդների մեջ՝ գեների «հիշո-

ղությամբ», որ փորձում են հաղթահարել վեպի կերպարները: Նոր հազարամյակը բերեց նորանոր գոյաբանական խնդիրներ, համաշխարհայնացման ծուղակը, որ այդպես էլ թույլ չեն տալիս օգտվել ապաքինում-մոռացումից: Վեպի էջերը կրկին հիշեցնում են անցած ճանապարհների խաթարումները, մատնացույց անում խիզախում և պայքար: Փոխվել է նաև Նոր Արեշի ժողովրդագրությունը. նախկին «ախպարստանը» վերածվել է խայտաբղետ կազմով վերաբնակիչների՝ իրարից է՛լ ավելի օտարված մարդկանց բնակատեղիի: Հնաբնակների հերթական մահը ավելի է պակասեցնում թաղի գունաշարը, որն ըստ էության անհամեմատ բազմագույն ու ինքնատիպ էր, քան տեղացիներինը:

Գրողը հետևողական է իր պատումի էջերում, նրան չի կասեցնում մերօրյա կյանքի բարդությունն ու հակասականությունը, հրաբխի հարևանությամբ ապրող մարդու ողբերգությունը, իր մեջ սպառվում են արդեն հույս ու հավատի վերջին պաշարները, որ գիտակցում է շուրջբոլոր հետևողականորեն հյուսվող սարդոստայնները և այդուհանդերձ սպասում է հրաշքի, որի միակ տերն ու արարիչը ինքն է միայն՝ Հերոս Հայը:

Վեպի կարևոր արժանիքներից է կերպարների խոսվածքը, որի հիմքում մեր հրաշք լեզուն է՝ արևմտահայերենը՝ իր տարատեսակ բարբառների նյուանսներով, և որոնք շեշտում են հումոր, քնարականություն, սրամտություն, կյանք ու կենցաղի անցելասույզ ձևեր: Կենտրոնական թեման, որ անցնում է ողջ վեպի միջով, 20-րդ դարասկզբի հայության մեծ ողբերգությունն է իր հարատևող հետևանքներով ու հոգեբանական վայրիվերումներով, որոնց ժառանգն ենք մենք և տխուր դասերի ականատեսը:

Անահիտ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ԻՐԵՎ ԵՔ ՈՒԶՈՒՄ ԻՆՁԵԻԹ

(Արեշցի Աննայի առաջին փոքրիկ հեքիաթը)

Այս ամբողջ թոհուբոհի մեջ ինձ այսուայնկողմ էիք հրում, կարծես բոլորիդ խանգարում էի: Կարծես համոզված էիք, որ միանգամայն անտեղի է իմ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ և աչք է ծակում, երբ բոլորը զբաղված են մի կերպ խցկվելով մի խաղի մեջ, որի կանոնները չգիտեն, միայն գիտեն անվանումը՝ «բարություն»: Հրիրում եք, չեմ ընկնում, ժպտում եմ, որ հանգստանաք, մտածեք, որ ինձնից վտանգ չկա: Ուզում եմ հագուստների կույտից մի բան էլ ինքս վերցնել, որ չկարծեք, թե ուրիշներին չտես եմ համարում: Չեք թողնում կարգին նայեմ, էլ ուր մնաց փորձեմ: Հրիրում եք ու խեթում հատկապես, որ հպարտությունը հանկարծ երևում է ձեզանից դուրս և ոչ թե՝ ձեր մեջ: Կարծես իրավունք չունեմ ձեզ նման ինքս էլ պարահանդեսում ներկա լինելու: Հետո՞ ինչ, որ թագավորի որդին ինձ հետ է ուզում խաղալ ոսկե գնդակով: Չէ՞ որ նա ձեզ հետ էր ուզում խաղալ, ձեզ էր ասում. «Հը՜, ասե՛ք, ի՞նչ եք ասում: Եկել եմ, ասե՛ք»: Ու հենց շրջվում էր, էլի սկսում էիք ինձ հրմշտել: Ես էլի ժպտում էի, որ հասկանաք՝ ես թագավորի որդու նկատմամբ անտարբեր եմ, ուրիշին եմ սիրում: Վազվզեցիք, հագնվեցիք, շպարվեցիք, զարդարվեցիք: Չթողիք, որ ես էլ մի բան, մի օղ կախեմ իմ սիրուն ականջներից, մի սիրուն մատանի վերցնեմ այդ կույտից, դնեմ իմ երկար միջնամատին:

Հրիրեցիք, հրմշտեցիք, խեթեցիք, չսիրեցիք, չհավանեցիք: Որ թագավորի տղան անվերջ ինձ է նայում՝ միայն ձեր նախանձոտ հայացքների հետագիծն էր հուշում ինձ:

Մինչև հասկացա, որ թագավորի որդուն չարժե այդքան անուշադրության մատնել, նա արդեն տխրել էր: Բայց դուք էլի շարժվում, բզզում, բզբզում, հանվում, հագնվում, ներկվում, զարդարվում էիք ու չէիք մոռանում ինձ հրմշտելով այսուայն կողմ գցել:

Իսկ երբ հասկացա, որ ինչ էլ լինի, մի բան պետք է վերցնեմ հագուստ-կապուստների, գոտիների, ճարմանդների, պայուսակների, վզնոցների կույտերից, դրանց հետքն էլ չէր մնացել: Թագավորի տղան ինձ գաղտագողի աչքով ցույց տվեց աթոռի տակ պահված մի անգույն տոպրակ: Երբ ետ տարա տոպրակի բերանը, տեսա այնտեղից ինձ նայող շքեղ փուլերով զգեստը, փակեցի տոպրակի բերանը, փախա մի թաքուն տեղ գտնելու, որ տեսնեմ՝ հագուստը իմ վրայո՞վ է: Թաքուն տեղ չկար: Ամեն տեղ վրա էիք պրծնում, կարծես իշամեղուներ լինեիք, որոնց բույնը ես էի քանդել: Մի անգամ էլ թագավորի որդին նայեց մեզ՝ բոլորիս, վեր կացավ, որ գնա: Հենց ես որոշեցի, որ չպետք է թույլ տալ նրա հեռացումը՝ էլ մեկ էլ ե՞րբ կհաջողվի նրա գալը, և հենց թագավորի որդին ժպտաց, ես հիշեցի, որ ուրիշին եմ սիրում ու արքնացա...

Ու տեսա, թե այն վառվռուն, թռվռան աղջկանից ինչ է մնացել: Նրա փոխարեն հայտնվել էր մի թնկթնկան պառավ, որ մի կերպ ուղղում էր մեջքը, նստում անկողնու մեջ, ճմլկոտում, հերթով կուլ էր տալիս բժշկի նշանակած դեղերը և ժպտալով գնում դեպի... իր հավերժական սերը, ում մի պահ, փոքրիկ մի պահ մոռացել էր, երբ թագավորի որդին նայել էր իրեն... երազում...

...Գևորգը վաղուց էր նկատել Աննային, գիտեր, որ ուզում է իր նախապապ բժիշկ Պոտուրյանի նման բժիշկ դառնալ, որ ձախողվել է քննությունից: Հիացած էր Աննայի փոքրիկ հեքիաթից: Աղջիկը հաստատ գրողական ձիրք ունի: Գուցե ե՞տ կանգնի բժիշկ դառնալու մտքից:

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎՈ

Ինչ-որ մեկը գնաց անտառ
Ու ետ չեկավ,
Ասում են, թե կաղնուն թիկնած՝
Հոգին հանգավ:

Ասում են, թե երբ որ մեռած
Նրան գտան,
Աչքերի մեջ ժպիտ էր խոր
Երանության:

Ձնծաղիկ էր բռունցքի մեջ,
Խաշամ՝ ուսին,
Գանգուրներում ամպի ծվեն,
Կապույտ լուսին:

Այտի վրա արցունքի շիթ,
Մաքուր կարոտ,
Եվ ճակատին հովի համբույր,
Ամպի որոտ:

Շուրթին՝ չասված խոսքի նշխար
Ու ծխախոտ,
Հայացքի մեջ՝ ուրիշ աշխարհ,
Ուրիշ աղոթք:

Մեջքը հենած հսկա ծառին,
Ձեռքում մահակ՝
Քնել էր նա մութ անտառի
Փեշերի տակ:

Խաշամներ էր հովը բերել,
Ծածկել նրան,
Ու քնել էր նա խոր քնով
Երանության...

***

Փակում եմ աչքերս ամոթից,
Որպես մի խելագար տարագիր,
Որ սիրտս կրակվի այս բոթից,
Եվ բալզամ դառնա քեզ՝ Երկիր:

Ներիր ինձ, ներիր ինձ դու նորեն
Քո պանդուխտ վիրավոր որդուն,
Որ գովքդ երգելու փոխարեն
Երգում է վերքերդ մշտարթուն:

Փակում եմ աչքերս կարոտից
Եվ հիշում տղերքին, որ չկան,
Ազատեք ինձ այն խոր ամոթից,
Որ ողջ եմ մնացել ու դեռ կամ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ես քո երգիչն եմ,
քո բանաստեղծը,
Քո անունը ինձ հեռվից կանչում է,
Բայց քեզնից հեռու, գրիցդ
բաժան,
Իմ երգը ինձնից ամաչում է:

Ես քո մաճկալն եմ, քո արդար
հացը,
Քո անունը իմ գործի շնչում է,
Բայց քեզնից հեռու, դաշտիցդ
բաժան,
Իմ բահը ինձնից ամաչում է:

Քո ուսուցիչն եմ, գալիքի սյունը,
Իմ մեջ քո ոգին միշտ կանաչում է,
Բայց քեզնից հեռու, լեզվիցդ բաժան,
Իմ խոսքը ինձնից ամաչում է:

Քո քահանան եմ, քո հոգու լույսը,
Եվ քո հույսն իմ մեջ անմար աճում է,
Բայց քեզնից հեռու, վանքիցդ
բաժան,
Իմ հավատն ինձնից ամաչում է:

Ես քո զինվորն եմ, քո կապված
ձեռքը,
Քո անունով իմ հոգին թռչում է,
Բայց քեզնից հեռու, հողիցդ բաժան,
Իմ զենքը ինձնից ամաչում է:

***

Մատուռի աղոթք, կռունկի մի երգ,
Քարե մագաղաթ և հույսի
տանիք...
Այս մեծ աշխարհում ուրիշ ի՞նչ է
պետք,
Որ ես քո գովքը անեմ,
հայրենի՛ք...

Հավատի նշխար, կարոտի մի
հետք,
Հովիվի հայացք և կապույտ
երկինք...
Այս մեծ աշխարհում ուրիշ ի՞նչ է
պետք,
Որ ես քո գովքը անեմ,
հայրենի՛ք...

Ուրցի անուշ բույր և անանց մի
վերք,
Բերդերին դաջված տողեր մայրենի...
Այս մեծ աշխարհում ուրիշ ի՞նչ է
պետք,
Որ ես քո գովքը անեմ, հայրենի՛ք,

Թոնրահացի հոտ, Նժդեհյան
տարերք,
Մաճկալի հավատ և անմեռ
մարտիկ...
Այս մեծ աշխարհում ուրիշ ի՞նչ է
պետք,
Որ ես քո գովքը անեմ,
հայրենի՛ք...

***

Երանի՜ ձեզ, քամինե՛ր,
Շրջում եք լո՜ւռ, աննկատ
Մեր լեռներով գեղանի
Եվ ձորերով անհատակ:

Նիրհ եք մտնում կարոտով
Անտառներում, կանաչում...
Երանի՜ ձեզ, քամինե՛ր,
Սահմաններ չեք ճանաչում:

***

Կարմիր շոր հագած մասրենու
թփեր՝
Կանաչ լեռների կրծքին ծվարած,
Հարյուր տարի անց ձեզ ո՞վ
կերգի,
Ո՞վ կհիշի ձեզ հարյուր տարի
անց:

Կանաչ դաշտերի մեռած
կակաչներ՝
Սևասիրտ ու պարզ գիշերվա
նման,
Հարյուր տարի անց ո՞վ պիտի
կանչի,
Ո՞վ պիտի շիկնի ձեր բույրով
անմահ:

Ձորում մոլորված աղբյուր ու
գետակ՝
Մամռոտ քարերի շուրթերն համբուրող,
Հարյուր տարի անց
ո՞վ կզովանա,
Ո՞վ կանմահանա ձեր գրկի մեջ,
ո՞վ...

Սեթևեթ կույսեր՝ գահանիստ
լեռան,
Հոգիներ դյութող կրակների պես,
Հարյուր տարի անց ձեզ
ո՞վ կսիրի,
Ձեզ ո՞վ երազով կկանչի անտես:

ԼՈՒՍԱԲԱԺ

Կարկամում է մութը աղոտ,
Եվ մեռնում է հույսը նրա,
Լուսնի շուրթը մնում է մերկ
Ու մարմնագեղ ամպի վրա:

Քչքչում է դաշտում առուն,
Ջրնգում է ձայնը նրա,
Մեգը նստում է անտառում,
Ժպտում աշնան խոսքի վրա:

Հովը փոխվում է մրրիկի
Եվ կիրճերի վրա գոռում,
Աշխետ բոցն է ելնում քնից,
Ու մեռնում է մութը ձորում:

ՀՐԱԺԵՇՏ ՁԵՆՔԻՍ

Մնաս բարով, ի՛մ զենք, մնաս
բարով...
Այն, ինչ անցանք մեկտեղ
ու միասին՝
Դժվարության, ցավի ճանապարհով,
Ողջը հուշ էր անտուն, երազ էր
սին:

Այժմ ների՛ր, ընկեր, հանձնում եմ
քեզ
Արարչական կյանքի
մայրամուտին,
Այս հողի հետ խառնվիր և հրակեզ
Դաշույններով ծածկիր
ամեն ուղի:

Որպես մարտից առաջ զրույցը
մեր,
Համբույրով իմ վերջին
հրաժեշտի,
Քեզ սեղմում եմ կրծքիս, անչա՛ր
ընկեր,
Արցունքներս խառնում քո
երկաթին:

Ես այստեղ եմ թողնում մի ո՜ղջ
աշխարհ,
Պատանությո՜ւն՝ որպես ցնորք
հույսի,
Եվ քե՛զ, ընկեր, և այն ուղին
երկար,
Որ անցել ենք մեկտեղ ու միասին:

Քեզ հանձնում եմ հողին,
ի՛մ բարեկամ,
Եվ սրտով իմ ահա անցնում է
սուր:
Ես քեզանից բաժան թո՜ւյլ եմ
այնքան,
Դու, ինձանից բաժան, երկա՛թ ես
կույր:

Եվ դու ների՛ր, ների՜ր
մեղավորիս,
Որ դրժեցի այսպես ամեն երդում,
Եվ համրաքայլ ահա լքում նորից,
Անմեկնելի մի ցավ պահած
սրտում:

Քեզ հանձնում եմ հողին,
ի՛մ բարեկամ,
Եվ գնում եմ անհայտ ճանապարհով,
Սակայն գիտե՛մ, մի օր նորից
կգամ...
Այժմ ներիր, ընկե՛ր, մնաս բարով:

***

Չէ՛, աշխարհում շեղ է մի բան
Եվ խորթ է ինձ այնպե՜ս...
Տառապանքս առնեմ, գնամ
Հեռուները անտես:

Ասում են, թե այնտեղ տխուր
Աղբյուրները իմ ջինջ
Կարոտի մի թել են հյուսել,
Սպասում են դեռ ինձ:

Ասում են, թե կորած սիրո
Երազներից մաքուր
Մի ծաղիկ է բացվել նորից
Խորհրդավոր այգում:

Ամպը քամուց փախել թաքուն,
Ջորի մեջ է իջել,
Եվ մանկության մի երազ է
Քամին նորից հիշել:

Ո՞վ է այստեղ ինձ հասկանում.
Որբություն է հոգու...
Գնամ հեռու անտառները
Եվ հոտն առնեմ մարդու:

Քնեմ հողի փափուկ կրծքին,
Ուր մոշ էի քաղում,
Քաղց է այստեղ հոգևորի,
Երազների թաղում:

ԱՂԲԱՎԻՇԱՊԸ

Հետերկրաշարժյան սուղ տարիներն էին: Քաղաքը փոշու վերմակի տակ կուչ եկած երեխայի էր նմանվում: Չնայած արդեն շատ տարիներ էին անցել, բայց ահարկու աղետի հետքերը աչք էին ծակում: Քաղաքի երկայնքով հոսում էր քչքչան գեղեցկուհին՝ Գյումրի գետակը, բայց աղետը նրան ևս պատուհասել էր: Տարիների ընթացքում գետակի ափերի կանաչազարդ տարածքները վերածվել էին տնակազարդ տարածքների: Գյումրի գետակը արագահոս էր ու այնքա՜ն լավ էր քշում-տանում աղբը: Իսկական երանություն էր գետաբերանին ապրողների համար: Աղբամաններին հասնելու էլ ինչ հարկ, երբ կա գետակը: Աղբատարը իսկ և իսկ դռան դիմացն էր, բա՛ց դուռդ ու նետի՛ր աղբը ջրի մեջ, ինչքան ուզես, կքշի-կտանի հեռո՜ւ:

Այս երևույթը վարակիչ բնույթ ստացավ. մեկը մյուսի օրինակին հետևելով՝ կերակրում էին գետակը աղբով ու կեղտով՝ էկոխիղճն ու էկոթասիբը կորցրած: Փոխվեցին ժամանակները, բայց չփոխվեցին մարդիկ ու սովորությունները: Գյումրի գետակն արդեն խեղդվում էր աղբից:

Սովորական օրերից մեկն էր, կամաց-կամաց մթնում էր, դրսում ոչ ոք չկար: Հարակից բոլոր տներում հոսանքը սկսեց արագ տատանվել, միաձայն ու տարօրինակ գվվոց էր լսվում: Քիչ հետո ջրի չփչփոց լսվեց. թվաց՝ մեկը որոշել էր լողալ աղբագետում: Բայց այս ամենը վախեցրեց բնակիչներին, ու նրանք որոշեցին դուրս գալ՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Բոլորը ապշահար նայեցին գետակի ուղղությամբ: Մի հսկա ստվեր էր խմորվում ջրից ու կարծես բարձրանում էր վեր: Վախը պատեց բոլորին, տեղնուտեղը քարացան իրենց տեսածից. նրանց առջև Գյումրի գետակից մի հրեշ էր դուրս գալիս, որ նմանվում էր ջրային վիշապի: Ի զարմանս բոլորի՝ վիշապի մարմնի մասերը աղբից էին կազմված: Ստացվում էր, որ իրենց նետած աղբը կուտակվել, կուտակվել ու մի հրեշ էր դարձել: Ամենահսկական վիշապ էր այն՝ երկար պոչով, խոշոր աչքերով ու հսկայական երախով: Շարժվում էր վիշապը, աջուձախ պոչն այնպես թափով էր հարվածում, որ ջուրը դուրս էր գալիս ափերից:

Բնակիչները չգիտեին ինչ անել, ինչպես վարվել իրենց պատուհասած վտանգի հետ: Ոչինչ ու ոչ ոք չկարողացավ օգնել. վիշապի դեմ բոլորն էին անզոր: Ամիսներ անցան, բայց վիշապը դեռ կար: Սակայն նա ոչինչ չէր անում, ոչ ոքի չէր վնասում, ուղղակի լողում էր, շարժվում էր մեկ աջ, մեկ ձախ՝ այդպես ջուրը լցնելով բնակիչների տները:

Գյումրի գետակի հարակից շրջանները սարսափելի վիճակում էին. մի քանի ամսվա ընթացքում ողջ տարածքը հայտնվել էր գրեթե ջրի տակ: Փրկարար ծառայությունները, միջազգային տարբեր մասշտաբների օգնությունը, խիզախ անհատներն ու նույնիսկ զենքերը չէին կարողանում տապալել աղբավիշապին:

Օրերից մի օր բնակիչներն իրար գլխի հավաքվեցին, որ մի ճար ու հնար գտնեն. վիճակը ծայրաստիճան վատ էր, նրանք նույնիսկ ապրելու տեղ չունեին: Տարբեր կարծիքներ ու առաջարկներ հնչեցին, բայց և ոչ մեկն էլ թվացյալ լուծումը չէր խնդրի: Ահա խոսեց երիտասարդներից մեկը և առաջարկեց մաքրել գետակը խոշոր աղբից. դրա հաշվին ջրի մակարդակը գոնե մի քիչ կիջներ:

Հաջորդ օրն իսկ որոշեցին անցնել գործի: Բայց մի բան նրանք հաշվի չէին առել. վիշապը...չէ՞ որ ոչ մեկն էլ այնքան անվախ չէր, որ գնար նրան մոտիկ: Նրանք կանգնեցին աղբավիշապից շատ հեռու ու սկսեցին մի քանի բան հանել ջրից: Նրանց թվաց, թե վիշապը մի փոքր հետ քաշվեց: Շատ մարդիկ միացան գետակի մաքրման աշխատանքներին: Մի քանի օր անց, երբ մաքրված էր խոշոր աղբի մեծ մասը, նրանք նկատեցին, որ վիշապի պոչը անհետացել է:

Գյումրի գետակը մաքրվում էր: Մեծաքանակ տեխնիկա ու տարբեր միջոցներ էին բերել և մաքրում էին գետակը մնացած աղբից ու կեղտից: Ու ամեն անգամ, երբ աղբը դուրս էր բերվում գետակից, վիշապի մարմնի մի հատվածը անցնում էր ջրի տակ: Շուրջ մեկ տարի անց, երբ Գյումրի գետակն ամբողջությամբ ազատված էր աղբից ու կեղտից, պարզ ու ջինջ էր խաղաղ երկնքի պես, աղբավիշապն ամբողջությամբ անհետացավ: Բոլորը շատ ուրախ էին. սա միասնական հաղթանակ էր: Երկար ժամանակ պահանջվեց տները վերականգնելու համար: Բայց բնությունից էլ կրկնակի շատ ժամանակ ու ջանքեր պահանջվեցին մարդկանց էկոխիղճն արթնացնելու ու էկոթասիբը հետ բերելու համար: Գետակի ափերը կանաչապատվեցին, գեղեցկացան, ինչպես նախկինում էր: Բայց այլևս ոչ ոք չէր համարձակվում անգամ մի թուղթ նետել ջրի մեջ, որովհետև երբ մոտենում ես գետակին ու նայում խորքը, քեզ երկու փայլուն կետեր են երևում. դրանք աղբավիշապի զույգ աչքերն են, որոնք ջրերի խորքից միշտ հետևում են:

Սերունդների հիշողության մեջ դեռ երկար կպահպանվի աղբավիշապի մասին պատմությունը: Ժողովուրդը, անշուշտ, նրա մասին լեգենդներ կհյուսի: Էկոխիղճն ու էկոթասիբն էլ մաքուր Գյումրի գետակի հետ կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ Գյումրի գետակի խորքում կան մեզ միշտ հետևող պսպղուն զույգ աչքերը:

Սյուզաննա ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԴՈՂ

ԱՄԱԼՅԱ ԵՆԳՈՅԱՆ

Ես Ամալյա Բագրատունի Ենգոյանն եմ: Ծնվել եմ 2008 թվականի հուլիսի 16-ին քաղաք Գյումրիում: Սկզբնական կրթությունս ստացել եմ Գյումրու թիվ 5 հիմնական դպրոցում, ապա տեղափոխվել և սովորում եմ Գյումրու թիվ 1 ավագ դպրոցում: Առաջին անգամ մասնակցել եմ «Ծիլ» գրական մրցանակաբաշխությանը՝ գրավելով 3-րդ հորիզոնական տեղը: Հետո մասնակցել եմ Հայաստանի գրողների միության կազմակերպած «Մինչև 27 տարեկան երիտասարդ ստեղծագործողների» մրցույթին՝ այս անգամ արժանանալով 1-ին մրցանակի:

ՓԱԽՈՒՍՏ

Փախչել այս քաղաքից: Բայց ո՞ւր կամ ո՞ւմ հետ: Ընդհանրապես էական չէ: Պետք է անհապաղ փախչել այս քաղաքից:

Առհասարակ, քաղաքներն անվտանգ են ցերեկները, ու այն դեպքերում, երբ դրանց փողոցների մասին հուշեր չունես, հակառակ դեպքում՝ այն քեզ կխժռի ներսից, դրսից, ամեն կողմից, կուլ կտա ամբողջովին:

Լքած քաղաք վերադառնալն, ի զարմանս բոլորի, իմ կամքով էր: Ես ինքնակամ էի եկել իմ հայրենի քաղաք:

Օպերայում Ճանճապանյան եղբայրներից ավագն էր՝ դիմացս նստած, ոտքը ոտքին գցած, իր մշտական կեցվածքով: Մանկուց, ինչ հիշում եմ նրան, քիթը վեր ցցած մարդիկ ու սովորությունները: Գյումրի գետակն արդեն խեղդվում էր աղբից:

Սովորական օրերից մեկն էր, կամաց-կամաց մթնում էր, դրսում ոչ ոք չկար: Հարակից բոլոր տներում հոսանքը սկսեց արագ տատանվել, միաձայն ու տարօրինակ գվվոց էր լսվում: Քիչ հետո ջրի չփչփոց լսվեց. թվաց՝ մեկը որոշել էր լողալ աղբագետում: Բայց այս ամենը վախեցրեց բնակիչներին, ու նրանք որոշեցին դուրս գալ՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Բոլորը ապշահար նայեցին գետակի ուղղությամբ: Մի հսկա ստվեր էր խմորվում ջրից ու կարծես բարձրանում էր վեր: Վախը պատեց բոլորին, տեղնուտեղը քարացան իրենց տեսածից. նրանց առջև Գյումրի գետակից մի հրեշ էր դուրս գալիս, որ նմանվում էր ջրային վիշապի: Ի զարմանս բոլորի՝ վիշապի մարմնի մասերը աղբից էին կազմված: Ստացվում էր, որ իրենց նետած աղբը կուտակվել, կուտակվել ու մի հրեշ էր դարձել: Ամենահսկական վիշապ էր այն՝ երկար պոչով, խոշոր աչքերով ու հսկայական երախով: Շարժվում էր վիշապը, աջուձախ

-Կոստյումավորվածին տեսնո՞ւմ ես. Ճանճապանյանների մեծն է, դժվար թե չհիշես... Այնպե՜ս էլ ինքնագոհ է նստել, կարծես իր փոքր եղբայրը չէր մի ամիս առաջ մարդ սպանողը: Հիմա բանտում է. իր պետքն էլ չէ: Հա՛ բա, փող տա որ ի՞նչ, ազատվի գա, ոտաց տակ խանգարի՞:

Տատս բամբասկոտ կին չէր, շատ էլ պարկեշտ ու բարձրաշխարհիկ էր, նրան բնութագրելիս հաճախ օգտագործում էին «խանում» բառը: Այն մարդկանցից էր, որ ամեն ինչ գիտեն, ամեն բան հասկանում են, բայց ամենուր կույր, համր ու մունջ են: Ամեն հարցին պատասխանում էր՝ չգիտեմ, չեմ տեսել, չեմ լսել, տեղյակ չեմ: Միշտ այն համոզմունքին էր, որ ամեն ինչից տեղեկացված, բայց հեռու մնալը բոլոր հնարավոր տարբերակներից ամենալավն է: Ինձ էլ վերադարձրեց անցյալին՝ իմանալով իմ ու Ճանճապանյան եղբայրների՝ ժամանակին լավ շփման մասին:

Բեմականացման ամբողջ ընթացքում նայում էի Ճանճապանյանին: Լուրջ դեմքն էլի քաշել էր հոգու վրա: Երևի որ չմոտենան ո՛չ իրեն, ո՛չ անպաշտպան հոգուն: Փորձում էր սառը թվալ: Ի՜նչ խոսք, դա բավականին հաջողվում էր նրան:

Այնքան ուշադիր էի նայում, որ նրա կերպարանքը ստիպեց ինձ ընկնել հուշերի գիրկը՝ այն ժամանակները, երբ մենք փոքր էինք. ես՝ 15, Ճանճապանյան ավագը՝ 17, կրտսերը՝ 14: Սկզբում հիշեցի մեր երեքով թաքուն շուն պահելը, հետո տատիս տան պատուհանները կոտրելը: Հիշելով հասա այն պահին, երբ թաց աչքերով ինձ էին ճանապարհում Մոսկվա, խոստանում, որ նամակներ կգրեն, միշտ շփումը կպահենք: Այո՛, կատարեցին խոստումները, մինչ այն պահը, երբ հերթական նամակիս ոչ մի արձագանք չստացա: Եվ ահա, տասներկու տարի անց, նորից այստեղ եմ՝ մի քիչ հեռու նստած, ու արդեն...

Բեմականացման ավարտից հետո, մտքերով տարված, ես ու տատս դուրս եկանք: Միասին անցանք Օպերայի փողոցով, որտեղով հազարավոր անգամ անցել էինք, երբ ես փոքր էի: Անցնելիս նաև քննարկում ու երկար խոսում էինք արվեստից, գրականությունից, թատրոնից: Նախասիրություններս գլխավորապես հենց այդ զրույցների շնորհիվ են ձևավորվել: Տատիս անունով ինձ կոչելն էլ ավելի էր ընդգծում մեր հոգևոր հարազատությունը:

Հետո տատս թույլ զգաց իրեն և գնաց տուն, ես մի քիչ էլ որոշեցի շրջել՝ անորոշ մի բան հուսալով: Չգիտեմ՝ կորած հուշեր գտնելո՞ւ, թե՞ հուշերը կորցնելու:

Տարիներ առաջ հուշերի տոպրակը պինդ փակել էի, թեև հարազատ քաղաքի փողոցները աջից ու ձախից պատռում էին այդ տոպրակը, տարբեր մտքեր լցնում ուղեղս: Այնքան ապրած ակնթարթներ էին գալիս աչքերիս առջև, որ նույնիսկ ճանապարհիցս էի շեղվել: Շեղվելը ո՜րն է՝ ընդհանրապես սխալ ուղղությամբ էի քայլում: Եվ այդպես ինքնամոռաց քայլեցի մինչ այն պահը, երբ մի ավտոմեքենա քիչ էր մնում... վրայովս անցներ: Մինչև ուշքի եկա ու շուրջբոլորս նայեցի, ներսից լսվեց.

- Զգո՛ւյշ, Աբե՛:

Ձայնի մեջ ծանոթ ելևէջ կար, բայց դեռ համոզված չէի, ավելի ուշադիր նայեցի ղեկին նստած երիտասարդին: Պարզվեց՝ չէի սխալվում. Ճանճապանյան ավագն էր:

- Բախտս բերեց, հարկ համարեցիր հիշել ինձ:

- Ո՞նց կարող էի չհիշել, ամբողջ բեմականացման ընթացքում այնպիսի հայացքով էիր նայում...

- Ի՞նչ հայացք:

- Դե՜, քննադատող, մի քիչ մեղադրող, մի խոսքով՝ քո պես էիր նայում: Բնութագրածս հայացքից ուրիշ ոչ ոք չունի:

Ինձ հիշելուն մի կերպ համակերպվեցի, բայց որ այսքան տարի անց ինձ բնորոշ հայացքն էլ էր հիշում, դա արդեն անակնկալ էր:

- Կգա՞ս՝ տուն տանեմ, ընթացքում էլ զրուցենք:

- Միգուցե դո՞ւ դուրս գաս, թե՞ ծագումդ թույլ չի տալիս ոտքով քաղաք իջնես:

- Որ ուզում ես՝ քեզ համար ծագումս էլ կողքի կդնեմ...Ախպերս իմանար, որ պիտի գայիր՝ մի ամիս կհետաձգեր մարդ սպանելը...

- Չեմ կարծում՝ մարդ սպանելն այն գործերից է, որ կարելի է հետաձգել հին ծանոթների պատճառով: Բայց դե՛, եթե շատ ես անհանգստանում իմ ու ախպորդ հանդիպման համար, մի բան ձեռնարկի, թող ազատվի:

- Լսի, շատ ես փոխվել, մեր իմացած հին Աբեհակից բան չի մնացել, քչից-շատից՝ խիտ մազերդ երևի թե: Ոնց որ դեկաբրիստ լինես. աքսորվել ես Ռուսաստան ու սառած եկել:

- Համենայնդեպս, դու նույնն ես:

- Հիշո՞ւմ ես, որ շուն էինք բերել պահելու:

«Թեման փոխելու նուրբ արվեստին էլ է փայլուն տիրապետում, ավելի ճիշտ՝ լուրջ խոսակցություններից վարպետորեն փախչելուն»,- մտածեցի ես:

- Հա՛, հիշում եմ, դրանից հետո էլ եմ հիշում. կեղտոտել էր վրադ: Շունն ո՜վ է, որ քեզ պես մարդու վրա կեղտոտի: Խեղճին ծեծեցիր ու դուրս շպրտեցիր: Վերջում էլ մեղավոր դուրս եկավ փոքր ախպերդ:

- Բա որ տատենցդ տան պատուհանները կոտրեցինք...

- Հա՛, դա վերջն էր, մանավանդ այն պահը, երբ ամբողջ մեղքը էլի գցեցիր ախպորդ վրա:

- Դե, փոքր էր, շատ չէին պատժի: Բա էս մեկը հիշո՞ւմ ես...

- Ինչ էլ հիշեցնես, պատմության վերջում միշտ էլ դու այնպես ես անում, որ ջրից չոր դուրս գաս:

- Երեխա էինք, շատ բան չէի հասկանում:

- Հիմա էլ հո հասկանում ես՝ ինչո՛ւ է ախպերդ քո փոխարեն բանտում:

- Այսի՞նքն, ի՞նչ նկատի ունես «քո փոխարեն» ասելով:

- Մարդիկ միամիտ չեն, լավ էլ հասկանում են, որ դու ես մարդուն վերացրել ու մեղքը բարդել փոքր ախպորդ վրա:

- Լսի՛, Աբեհա՛կ,- ձեռքը կոկորդիս դնելով՝ շարունակեց նա,- շա՜տ հասկացող ես դարձել, դե՛ համարձակվի ուրիշ տեղ էլ լեզուդ երկարացնել, ու կտեսնես՝ ինչ կլինի վիճակդ: Հասկացա՞ր:

«Չսպանեց, որովհետև մարդ չկար, ում վրա կկարողանար բարդել իր մեղքը: Չսպանեց, որովհետև թանկ կվճարեր: Միայն սպառնաց. չէի զարմանա, եթե նույնիսկ փորձեր գնել լռությունս: Իր համար կարևոր էր իր անունը, իր գրաված դիրքը հասարակության մեջ, նա թույլ չէր տա՝ իր անվան կողքին թեկուզ մի պախարակիչ արարքի բիծ հայտնվի. նա Նորին գերազանցությունն է»,-շարունակ մտմտում էի:

Բայց կարո՞ղ էի արդյոք ամեն ինչ էսպես թողնել կամ իրավունք ունեի՞ ամեն ինչ իմանալով՝ լռել: Պատասխանն ակնհայտ էր. ես պիտի մի բան անեմ հանուն վաղեմի մտերմության: Երևի պատասխանատվության զգացումն էր առաջնորդում ինձ: Ճանճապանյան փոքրը միևնույն չէր ինձ համար, չեմ կարող հստակ ասել՝ ինչու... Չէ՞ որ հենց սրա համար էի վերադարձել լքած քաղաք:

Չգիտեմ՝ ո՛ր չափանիշներով է որոշվում մարդու շատ կամ քիչ ապրելը, սակայն ես կարծում եմ՝ բավականին ապրել եմ, որ կյանքի մասին ենթադրություններ անեմ: Ըմբոստանալն ու հակաճառելն ուզածին հասնելու դյուրին ուղի չեն, ավելի խորաթափանց ծրագիր է պետք՝ հոգեպես ճնշել: Մի երկտող գրեցի, որի բովանդակությունը չեմ ցանկանում հայտնել, քանի որ անձնական է: Վստահ էի՝ նա չէր կարողանա անտարբերությամբ ընթերցել գրածս: Գիտեի՝ մտքերս կդիպչեն խղճին, ու նա... կընկրկի:

Այդպես էլ եղավ, նամակս անպատասխան մնաց, հաջորդող օրերին էլ չտեսա նրան, մի շաբաթից էլ Ճանճապանյան փոքրը ազատվեց:

Նա փախել էր քաղաքից կամ գուցե ինքն իրենից: Քաղաքը իրենը չէր:

ԹՂԹԵ ԳՆԴԻԿԸ

Գիշերվա ժամը երկուսն էր, երբ Ֆրանչեսկոն ու ես պատահմամբ (բայց իսկապե՞ս պատահմունք էր) անցանք Կալցավարա փողոցի համար 37 շենքի մոտով, ուր ապրում է բանաստեղծը: Որքա՜ն արդար ու խորհրդանշական է, որ հանրահայտ բանաստեղծը բնակվում է մեծ շենքի վերջին, բավական անհրապույր այդ հարկում: Ներքևում կանգնած՝ երկուսս էլ, առանց մի բառ ասելու, նայեցինք վեր հուսալով: Շենքի ճակատամասը թաղված էր մթության մեջ, բայց վերևում՝ այնտեղ, ուր վերջին քիվն անհետանում է երկնքի մշուշների մեջ, մի պատուհան (միայն դա) թույլ լույս էր արձակում: Մնացյալի հետ համեմատած, մարդկության հետ համեմատած, որ քնած էր գազանի քնով, որպես խուփ, գծուծ ու կույր պատուհանների սև շարքի հակոտնյա, որքա՜ն հաղթականորեն էր լուսավորում այն:

Հնամաշ ռոմանտիկա էր գուցե, բայց մեզ սփոփեց այն միտքը, թե մինչ մյուսները ընկղմված էին խոր քնի մեջ, այնտեղ՝ վերևում, մի մենակյաց լամպի լույսի տակ նա բանաստեղծություններ էր հորինում: Իսկապես տարաժամ էր, գիշերվա ամենահեռու անկյունը, երբ երազներն են ծնվում, և հոգին, եթե կարող է, ազատագրվում է կուտակված ցավերից՝ սավառնելով կտուրների վրայով ու աշխարհի մշուշների միջով, փնտրելով խորհրդավոր այն բառերը, որ վաղը, վերին շնորհով խոցելու են մարդկանց սրտերը՝ նրանց դրդելով մտածելու վեհ բաների մասին: Իսկապես, դժվար կլիներ պատկերացնելը, որ բանաստեղծներն աշխատեին, ենթադրենք, առավոտյան ժամը տասին, երբ հենց նոր են սափրվել, մի առատ նախաճաշից հետո:

Մինչ դեմքերս այդպես վեր էինք պարզել, ու գլխներովս խառնիխուռն մտքեր էին անցնում, ինչ-որ բան ստվերի պես հանկարծ շարժվեց լուսավորված պատուհանի շրջանակի մեջ և դանդաղ անկումով գահավիժեց մեզ վրա: Նախքան գետնին հասնելը ամենամոտ լամպարի լույսի մեջ երևաց, որ դա թղթե գնդիկ էր: Ընկավ մայթի վրա: Մեզ հասցեագրված ուղերձ էր կամ հավանաբար կանչ՝ ուղղված անծանոթ անցորդին, ով առաջինը գտներ այն, ինչպես անում են անմարդաբնակ կղզում նավաբեկվածները՝ շշի մեջ փակելով այն ու հանձնելով օվկիանոսի ալիքների ողորմածությանը: Սա էր առաջին միտքը, որ ծագեց մեր գլխում: Կամ էլ բանաստեղծը վատ էր զգում, ու քանի որ տանը ոչ ոք չկար, օգնության էր կանչում: Եվ կամ գուցե գողե՞ր էին մտել իր սենյակը, ու այդ թղթի կտորը հայտնում էր այդ մասին:

Ֆրանչեսկոն ու ես միասին կռացանք՝ թղթե այդ գնդիկը վերցնելու: Ես ավելի ճարպիկ գտնվեցի:

-Այդ ի՞նչ է,-հարցրեց ընկերս:

Լամպարի լույսի տակ ես արդեն բացում էի այն: Դա ճմռթած թուղթ չէր: Օգնության կանչ չէր: Իրականությունն ավելի պարզ ու ճապաղ էր կամ ավելի հանելուկային: Ձեռքումս հայտնաբերեցի թղթի կտորների մի կույտ, որի վրա նշմարեցի բառերի ծվեններ: Ակնհայտորեն, բանաստեղծը գրելուց հետո հիասթափվել էր կամ կատաղությամբ էր համակվել, թուղթը պատառոտել էր հարյուր կտորների, դրանցից մի գնդիկ էր սարքել ու շպրտել պատուհանից դուրս:

-Դեն մի՛ նետիր,- ասաց Ֆրանչեսկոն,- գուցե դա մի շատ գեղեցիկ բանաստեղծություն է: Մի քիչ համբերություն դրսևորելով՝ կարող ենք կտորները իրար կպցնել:

-Եթե գեղեցիկ բան լիներ, դեն չէր նետի, հանգի՛ստ եղիր: Եթե դեն է նետել, նշանակում է զղջացել է, նշանակում է՝ նրան դուր չի եկել, ու դա ինքը չի ընդունում որպես իրենը:

-Երևում է, դու նրան չես ճանաչում: Նրա ամենահայտնի տողերը փրկել են իր ընկերները…Մինչդեռ ինքն ուզեցել է ոչնչացնել դրանք: Նա դժվարահաճ է:

-Եվ հետո, - ասացի,- ծեր է արդեն, որոշակի տարիքից հետո բանաստեղծություններ այլևս չեն գրում:

-Չէ՛, գրում է, միայն թե չի տպագրում դրանք, քանզի երբևէ գոհ չի լինում իր գրածներից:

-Լա՛վ: Իսկ եթե բանաստեղծության փոխարեն, -ասացի ես,- լոկ հասարակ նշո՞ւմ է, ընկերոջն ուղղված նամա՞կ, կամ էլ պարզապես ծախսերի ցուցակագրո՞ւմ:

-Էս ժամի՞ն:

-Հա՛, էս ժամին: Բանաստեղծները, կարծում եմ, հաշիվներ են կազմում գիշերվա երկուսին:

Այդժամ ես նորից կոլոլեցի թղթի ծվեններն ու դրեցի բաճկոնիս գրպանը: Ի հեճուկս Ֆրանչեսկոյի բողոքների՝ այդ դրվագներն այլևս չառանձնացրի, չփռեցի սեղանի վրա, չփորձեցի վերակազմել թուղթն ու կարդալ, թե ինչ էր գրված այնտեղ: Թղթե գնդիկը, համարյա այն նույն վիճակում, ինչ վիճակում վերցրել էի գետնից, փակեցի մի արկղում, որ մինչև հիմա մնում է այնտեղ:

Բացառված չէր, որ ընկերս իրավացի լիներ, և մեծ բանաստեղծը իսկապես զղջացած լիներ իր գրածի համար և կատարելության իր այդ մոլեգնության պատճառով ոչնչացրած լիներ տողեր, որոնք այլ դեպքում դառնալու էին անմահ: Կարող է պատահել, որ նրա գրած բառերն այդ գիշեր կազմեին աստվածային մի ներդաշնակություն, լինեին ամենահզոր ու ամենամաքուր բանը, որ երբևէ ստեղծվել է աշխարհում: Բայց պիտի հաշվի առնել այլ վարկածներ ևս. կարող է այն լիներ անկարևոր թղթի մի կտոր, որ, ինչ ես քիչ առաջ էի ասում, տնային գործերի մասին մի ճապաղ նշագրություն լիներ ընդամենը. կամ թե, գուցե բանաստեղծը չէր գրել դա ու նետել դուրս, այլ նրան հարազատ կամ նրա մոտ ծառայող ինչ-որ մեկը, կամ գուցե իսկապե՞ս դա բանաստեղծություն էր, բայց անհաջող մի բանաստեղծություն, կամ էլ ուղղակի չի կարելի բացառել, որ մենք սխալվել էինք, որ լուսավոր այն պատուհանը բանաստեղծինը չէր, այլ պատկանում էր մեկ այլ բնակարանի, ու այդժամ այդ ձեռագրի պատառիկը այլ բան չի լինի, քան ճմռթված մի թուղթ ընդամենը: Բայց և այնպես, այդ հակասական ենթադրությունները չեն, որ ինձ ետ են պահում թուղթը վերականգնելուց: Հակառակը: Գտածոյի գիշերային հանգամանքները, գուցե անտեղի համոզմունքն առ այն, թե առեղծվածային ինչ-որ խզբզոց պարունակում է (ավելի հաճախ, քան մենք եք կարծում) կյանքի այնպիսի փաստեր, որոնք արտաքնապես թվում են, թե կախված են կույր պատահականությունից, և այն միտքը, թե նախախնամությունն էր, ամենագետ ճակատագիրը, որ հենց մեզ՝ ինձ ու Ֆրանչեսկոյին էր դրել այդ վայրում, հենց այդ գիշեր, հենց այդ ժամին, որպեսզի կարողանայինք վերցնել մի գանձ, որն այլ դեպքում պիտի կորչեր: Այդ ամենը՝ անբանականի վրա հիմնված փաստարկների հանդեպ իմ հակումով, ինձ համոզեց, որ թղթե գնդիկը պարունակում է մի ահռելի գաղտնիք. գերմարդկային գեղեցկություն ունեցող մի բանաստեղծություն, նկատի ունեմ, որ բանաստեղծը ոչնչացրել էր այն դառն համոզմունքից, թե չի կարողանալու այլևս երբեք հասնել այդպիսի բարձրության (իսկապես, արվեստագետն իր կորագծի գագաթին հասնելուց հետո ճակատագրայնորեն գահավիժում է ցած և ստիպված է այլևս ատել այն ամենը, ինչ արել է դրանից առաջ, և ինչը նրան անընդհատ հիշեցնում է ընդմիշտ կորսված մի երջանկության մասին):

Նման համոզվածությամբ՝ ես նախընտրում եմ թանկարժեք անակնկալը պահպանել այնպես, ինչպես կա, և թաքուն պահել մի անորոշ ապագայի համար: Ու ինչպես որ կյանքում որևէ լավ բանի սպասումը անպայմանորեն մեզ տալիս է ավելի շատ ուրախություն, քան թե այն ունենալու իրողությունը (և իմաստուն բան է անմիջապես չօգտվել այդ լավ բանից, այլ ընբոշխնել ցանկության այն հիանալի տեսակը, որ բավարարված լինելու, բայց ոչ դեռևս իրականում բավարարություն ստանալու անխախտ ցանկությունն է, մի խոսքով՝ սպասումը, որն այլևս երկյուղներ ու կասկածներ չունի, հավանաբար մարդուն շնորհված երջանկության միակ ձևն է, ինչպես որ գարունը, որը խոստում է և ուրախացնում է մարդկանց ավելի շատ, քան ամառը, քանզի վերջինս իրականացումն է այն բանի, ինչը տենչում էինք), այդպես էլ անհայտ բանաստեղծության հմայքը այն երևակայությամբ կանխավ ապրելն է, ինչը հավասար է և անգամ գերազանցում է ուղղակի և խորին իմացության գեղարվեստական հաճույքին: Պիտի ասեն սակայն, թե դա երևակայության չափազանց անբռնազբոս խաղ է, թե այդպես դուռ է բացվում խորհրդապաշտության ու փչոցների համար: Բայց եթե նայենք ետ, պիտի հավաստենք, որ ամենաերանելի ու մեծ ուրախությունները երբևէ չեն ունեցել ավելի հաստատուն կառույց:

Ասենք, չլինի՞ այստեղ բանաստեղծության առեղծվածի հետ գործ ունենք՝ արտահայտված իր ծայրահեղ օրինակներից մեկի մեջ: Իսկապես, հնարավոր է, որ այն կարիք չունենա գործածելու բաց և ընդհանուրի համար հասկանալի մի լեզու, ոչ էլ ունենա տրամաբանական իմաստ, ոչ էլ իր բառերը կազմեն կապակցված նախադասություններ կամ արտահայտեն ողջամիտ հայեցակարգեր: Նաև բառերը, ինչպես այս դեպքում, կարող են բաժանվել կտորների և աղոտ միախառնվեն վանկերի մեքենայության մեջ: Ավելին. դրա կախարդանքը վայելելու, դրա թափը զգալու համար ավելորդ է դրանք կարդալը: Բավական է նայել դրանց, բավական է դրանց հետ շփում-կապը, ֆիզիկական հարևանությունը:

Գուցե և այդպես է: Կարևորը մանավանդ հավատալն է, որ այդ գրքույկի մեջ, այդ էջում, այդ տողերում, այդ նշանների մեջ գլուխգործոց է (տե՛ս Լեոպարդիի Զիբալդոն. «Մեծ մասամբ, գեղեցիկը գեղեցիկ է, քանզի այդպիսին է իրեն համարում»): Ես, օրինակի համար, երբ բացում եմ դարակս ու ձեռքիս մեջ սեղմում թղթե այդ գնդիկը, ուր՝ պատառիկների այդ թնջուկում, ենթադրաբար թաքնված է բանաստեղծության մի ուրվագիծ, գուցե ներշնչանքի ուժով, բայց հրաշալիորեն ինձ ավելի բավարարված եմ զգում, ավելի կայտառ, ավելի թեթև, նշմարում եմ հոգևոր մեծության լույսը, և ծայրագույն հորիզոնից դանդաղորեն դեպի ինձ են առաջանում լեռները, մենակյաց լեռները:

(Իսկ գուցե դրա մեջ այլ բան չկա, քան անանուն մի նամակի սևագիր՝ որևէ գործընկերոջ բախտին քար գցելու համար):

Իտալերենից թարգմանեց
Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՀՈՒՅՍԸ ՄՆԱԾԵԼ Է ԵՐԿՆՔԻՑ ՎԵՐ

Օրերս Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամի Գյումրու գրասենյակում տեղի ունեցավ Թինա Վարդանյանի «Երկնքից վեր» բանաստեղծական ժողովածուի շնորհանդեսը, որին մասնակցում էին հեղինակի գրչընկերներն ու հարազատները, բազմաթիվ ուսանողներ:

Ժողովածուն տպագրվել է հեղինակի որդիների հոգածությամբ:

Լինեմ այդպես երկինքներում,
//Տանեմ այդպես երկնի հուշեր
եզերքներին
Ու իմ ծաղկի թերթիկները //
Շաղ տամ այսպես երկինքներից:
Թ. Վարդանյան

Սկիզբը, նախասկիզբը՝ որպես ավետիս արարումի և ուղենիշ ավարտի. «Իմ գալուստը մեռնվել էր // Իմ գալուստից շատ-շատ առաջ…»:

Թինա Վարդանյանի տողերը ապրված ակունքից են, իսկ ավարտը նրա՝ ասես ապրումից հազար անգամ ավելի: Ներսում հոգևոր լույսն է, իր իսկ բառերով, չափազանց շատ. նրա բոլոր խաղերը վերևի՝ ո՛չ հողեղենի, ոչ նյութի շրջապտույտում են, այլ աստղերի ու արևի լույսի հետ են՝ և՛ մտքերն են ամուր կապված երկնքի հետ, և՛ կյանքը՝ դեռ սլացքի պահին, և՛ ցավը՝ դեռ տառապանքի մարմնում: «Կամքս երկինք է // Եվ թախիծներ է հավաքում իր մեջ…»:

Առհասարակ, ապրել՝ գնահատելով ունեցածը, պայքարել՝ արժևորելով նպատակներն ու երազանքները. մարդկային է շատ և բնորոշ իմաստնացած-խոհական կնոջը: Թե՛ գալուստ՝ ծնունդ, թե՛ հեռացում, և ասես չկա սրանց միջև ոչինչ՝ ո՛չ ժամանակ, ո՛չ տարածություն: Ներքին մի զգացողությամբ՝ նրա տողերը թախիծ են ներարկում ակամա՝ անգամ այդքան մեծ՝ ճառագող լույսի առկայության դեպքում: Եվ լույսն է նրան պահում ու պահելու է հար՝ իր իսկ ներսից՝ սեփակա՛ն հոգու լույսը: «Ամենասև հողի տեսքով // Ու երկնքի պես սիրելով եկա: // Եկա, որ ծառերին ասեմ՝ // Բարձրացե՛ք միջովս: // Երկնքի թախիծով կարծրացա…»,-նրա մտորումների բարձրակետն է:

Ընդհանրապես, հարկ է հեղինակի ապրում-բանաստեղծություններին հաղորդակից դառնալ տող առ տող. «Իմ ներսում թռչունը վիրավոր է, // Իմ ներսում ամպոտ է երկինքը»: Հետո՝ «Ես կլինեմ հեռու, // Ես կլինեմ մոտիկ, // Ու գալուստիս ձևը չի փոխվելու», որին հաջորդում է ամփոփումը՝ երիցս կոչով. «Սիրի՛ր ինձ հողի նման, // Որ

գամ էլի նույն ձևով: // Սիրի՛ր ինձ միայն հողի նման, // Որ գալուստիս ձևով հեռանամ»:

Ինչպե՞ս անվանել հեղինակի բանաստեղծությունը մեծ հաշվով. միգուցե կանխազգացո՞ւմ, չմիջնորդավորված ամուր կապի արտահայտությո՞ւն գուցե՝ հոգու և երկնքի, երկնային լույսի, իր խոսքերով, կես աստղի միջև, որ աստղը մեկանա-ամբողջանա՛ հավետ հաստատելով մյուս կեսի ավարտուն գոյությունը: Ձգայուն տողեր են, և նրա բանաստեղծություններն էլ առաջին հերթին նրա փափուկ ու կարծր, հողե ու երկնային, իբրև վերջնական ավարտ՝ մասի ու ամբողջի վկայումն են. «Հիմա հենց այստեղ, // Այս լռության մեջ, // Իմ այս տարածքում // Ինձ համար ոչ մի ծաղիկ չի բացվում, // Մի մեղու հիմա նստել է մատիս, // Բզզում է անվերջ, // Բզզում է, բզզում…»:

Եվ սեր անպայման: Ինչպե՞ս կարող են չլցվել նրա երակները սիրով՝ լայն առումով, ինչպե՞ս կարող է նա բաց չլինել ամեն օրվա լիուլի պարգև սիրո համար:

Այսպիսով, նրա մտորումները չընդհատվող շրջագծով են. շեշտադրվում է կարևորը՝ մի կողմից՝ հային ու հայկականին, հարազատ քաղաքին վերաբերող, մյուս կողմից՝ հոգևորին, երկնայինին, լույսին ու այնքան սիրելի երկնքին:

Գրքում բոլոր զուգորդումները հետաքրքիր են, տրամաբանորեն ճշգրիտ: Միով բանիվ, բոլորը և յուրաքանչյուրը մեկ առ մեկ տանում են հեղինակին մեն-միակ ուղեծրով՝ հավերժի ուղով դեպի իրեն գրավող երկինքը. «Դադար առնել մի ակնթարթ, // Չմիանալ երկինքներին, // Եվ փաթաթվել ոտնատակի հողագնդին:

Ինքնաճանաչումից մինչև զուսպ աղոթք առ Աստված, իսկ այդ ճանապարհին՝ գծելով հաստատուն քայլերը դեպի երկինք. «Լինեմ այդպես երկինքներում, // Տանեմ այդպես երկնի հուշեր եզերքներին // Ու իմ ծաղկի թերթիկները // Շաղ տամ այսպես երկինքներից…»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

Ամեն բանաստեղծ միայնակ է յուրովի առավել ևս ամբոխի մեջ, որտեղ հակադրությունն ավելի է շեշտվում: Թինա Վարդանյան մեղմ ըմբոստը, որի խոհերն ու ոգեղեն ընթացքը ձգվում են երկնքից վեր, խոսում է այս միայնակների անունից: Նա անհիծյալ հարցեր ունի՝ «ունենալ ինչպե՞ս և ինչի՞ համար: Ո՞ւմ են հարկավոր բառերն ինքնախոս: Մի՞թե երկնքում էլ բարև չկա»: «Ճամփաբաժան բախտի քարի» մոտ նա խոստովանում է՝ «իմ դատարկն հիմա քո դատարկը չէ, որ դատարկի մեջ էլ չի դիմանում»: Բայց միաժամանակ ներքին փոխակերպումների հիացումը շարունակում է ուղեկցել նրան. «Իմ գրիչը, որ փոխվում է անընդհատ մատներիս մեջ, բայց էլի նույնն է, նա էլի իմ սերն է, որ խլում է ինձ ամեն ինչից, որ ավելի շատ ինձ մոտեցնի Աստծուն»:

Աստծուն մոտենալու վերծիգ ուղին է Թինայի ընտրյալը: Բայց մինչ այդ՝ «գնացի և՛ աջ,// և՛ ձախ, գնացի, //բարձրացա վերև, //նորից իջա ցած,// ամեն կողմ փակվեց ու խաչվեց ուղիս. //էլի մնացի իմ միջուկի հետ՝ //խաչիս մեջտեղում, //էլի միայնակ, //էլի անճանաչ»:

Այո՛, ելքը միշտ երկինքն է: Եվ ծնվում է ինքնագնահատականը. «Տե՛ր իմ, ես գիտեմ՝ ես ի՞նչ բանաստեղծ, //Դու ես և՛ Բանը, և՛ Ստեղծողն ես իմ… //Մնաց, որ հնչի մի վերջին ղողանջ, //Բացվի մի ուղի՝ գեթ վերջինը լայն…:

Թինայի զրույցը տիեզերական ոլորտների մեջ է՝ անժամանակ երկինքներում. «Մի անմարմին հարս եմ դարձել, //որ միանակ հրայրքներին իմ ոգեղեն»:

Սրանով հանդերձ՝ Թինան նման է մեր հավատի տաճարում մեղմորեն վառվող կերոնի, որ լույս ու սեր է շշնջում:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներքին ապրումների քաոսի մեջ Թինա Վարդանյանը, իր ներաշխարհի ծալքերը տող առ տող բացելով, բացահայտում է իր տագնապները, կյանքը արժևորելու չափանիշները՝ երբեմն այնքան անկայուն և ոչ տարափոխիկ, որ թվում է՛ էլ ոչ մի լուսավոր ցոլք չի մնացել ապրելու համար, բայց հանկարծ մի այլ գործի մեջ նա աստղաթափ է տենչում, և դա լիուլի բավ է իրեն երջանիկ զգալու համար: Ուշագրավ է կորիզի մասին իր կանխատեսումը /իրեն նույնացնելով կորիզի հետ/: Բանաստեղծությունները միատարր ու միօրինակ չեն, այլ հակասական, երբեմն ըմբոստ կյանքի անհամաչափության, անարդարացի լինելու մեջ, և խորամուխ լինելով իր ապրումների լաբիրինթում, նա փորձում է իր պրիզմայով անցկացնել այն ամենը, ինչ իրեն ցավեցնում է, մտատանջում: Միայնության գաղափարը, լքվածությունը Թինայի պոեզիայի լեյտմոտիվն է, որն էլ ստեղծում է պոետի ամբողջական կերպարը, ներաշխարհը՝ իր ներս ու դրսով: Թինա Վարդանյանը պաշտամունք ուներ թռչունների հանդեպ, բնությանը նույնանալու նրա ցայտուն առնչությունը հենց այս արտահայտությամբ է հաստատվում. «ծառեր, բարձրացեք միջովս, ես հող եմ»:

Բնապաշտական այս մղումով գրված գործերը ավելին են, քան բուն բանաստեղծությունները: Ապրված պահերը պոեզիայի վերածելը արդեն միտում չէ, այլ պոռթկուն մի ասելիք, ճիչ, զգայուն հոգու կայացման միջոց:

Շնորհիկ ՇԱՀԻՆՅԱՆ

***

Ի՞նչ կա երկնքից վեր. ներշնչա՞նք, ներշնչա՞նք միայն: Կա բանաստեղծության ծնունդ Թինա Վարդանյանի տանիքի տակ, որ այս գիրքն է: Բանաստեղծուհին իր ստեղծագործական ճանապարհն անցել և անցնում է աստղերի ուղեկցությամբ. «Քո լույս դեմքի աստղը գրկած՝ ես շատ հեռու սլացա»: Հեղինակն ապրել է «իսկական խռովք», «իսկական երկունք», գրել է տողեր՝ վաղնջական ցողով մկրտված: Ինչպիսի՜ պայծառ ներշնչանքներ պիտի ունենա կինը, որպեսզի գրի. «Արցունքներս դառնում էին ադամանդներ, //Մնում էին գագաթներին»: Ուշագրավ է և՛ այս հրավառ պատկերը.

Բիբերիդ խորքից թռան
հասմիկներ
Ու մատներիցս, որ դեռ չեն ծաղկել,
Սահեցին, կորան ու թռչում են դեռ:

Հեղինակային ներսուզումները կրակը հասնում է նպատակին: Սակայն հեքիաթը մնում է միշտ անավարտ և շարունակվում, երկնքից վեր: Իսկ երկնքի տակ երազի կյանքն է նոր ոգի առնում. «Ես կգամ՝ կառչելով ցայգի կոպերից, // Մթությունս կխառնեմ մթությանդ, // կհեռանամ՝ // Բաց թողնելով խռովքի թռչուններ»:

Երբ պատկերավորությունը բխում է անկեղծ ակունքներից, բառը՝ ոչ թե արգելակ, այլ դառնում է խթանիչ ուժ: «Բառերս դարձան մանկան աչքեր»:

Ամեն լուսաբացի աշխարհը նորանում է: Մանկական աչքերով նայող բառերը ընդառաջ են գնում ստեղծագործողին, որի հարազատ ու սիրելի գրասեղանը բաբախում է սրտի պես: «Իմ գրիչը… իմ սերն է»,- խոստովանում է բանաստեղծուհին:

Հաճախ բանաստեղծների համար բառերը դառնում են հայելի: Իսկ Թինա Վարդանյանը իր հայելին գտել է բառերից դուրս: «Իմ ունեցած ամեն ինչի կողքին հիմա // Կա մի փոքրիկ, պարզ հայելի՝ // Երկնքից կախ՝ Աստծո ձեռքին»: Եվ այդ հայելու մեջ նայելով՝ նա ստանում էր ներշնչանքային նորանոր ազդակներ: «Ճախրի՛ր, իմ բարի՛, իմ խաղաղասե՛ր, // Իմ բախտի թռչուն. //Թռիչքների մեջ քո անզուգական // Մշտնջենական ցավդ չես զգում, // Եվ հետագիծը քո սլաքների // Ոչ մի գույն չունի. միշտ թափանցիկ է»:

«Երջանկությունս անթևաբախում» տողով սկսվող բանաստեղծությունը մի ամբողջական այլաբանություն է, գողտրիկ մի ստեղծագործություն, որից ոչ մի բառ չես կարող դուրս թողնել և չես կարող նաև նոր բառ ավելացնել գտնված կառույցին: Բանաստեղծությունը բազմիմաստ է. ամեն մեկը կարող է հասկանալ ճանաչողության իր ձևով:

Թինա Վարդանյանը իր հոգեաշխարհը արտահայտելու համար կիրառել է յուրօրինակ մակդիրներ. կարմիր թախիծներ, աստղե վերմակ, ճամփաբաժան բախտ, կարմիր ամառ, հարամնա մկրտություն…

Ոչ թե ես գրեցի այս խոսքը, այլ «Երկնքից վեր» գրքի լավագույն տողերը և գողտրիկ բանաստեղծությունները իրենց ներշնչանքով գրեցին՝ մի թափանցիկ հետագիծ թողնելով էջերի ճերմակ երկնքում, որից դեռ լսվում է բանաստեղծուհու ձայնը. «Բառերս սպասեցին լուսաբացին»: Ա՛յս լուսաբացին:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

ԹԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

***

Հոգո՛ւս ցնորված աշուն,
Այս կիրակի
Անտառիս սարսուռ գինին քամեցի
Ու լուսամփոփի լույսի տակ
Նորից ընթերցեցի քեզ
Ու քամածս կաթիլ-կաթիլ կաթեցրի
Տողերիդ կարոտներին:

***

Կորիզն իր բնում է հյութեղ,
Թե որ փակ մնա, ծիլ կտա,
Կոտրեցիր, ուտես թե չուտես՝
Իմաստը նույնն է: Ես կորիզ եմ:
Ես կորիզ եմ կույր ու թռչող:
Քո մեջ գաղտնիք կա եզերքների:
Հազարավոր թռիչքներ կան քո մեջ,
Կույրիս թռիչքը բարձր է ավելի:

***

Հացը այսօր քո մատներով ինձ սիրեց:
Հա՞ց է, թե՞ ձեռք մատներիս մեջ, չգիտեմ,
Հաց ես և՛ դու, և՛ ես եմ հաց, սիրելի՛ս:
Մի բան գիտեր հացթուխը մեծ՝
Դու՝ հաց ճերմակ, իսկ ես՝ սև:

***

Ամենասև հողի տեսքով
Ու երկնքի պես սիրելով եկա:
Եկա, որ ծառերին ասեմ՝
Բարձրացե՛ք միջովս:
Երկնի թախիծով կարծրացա,
Բայց սերմնացանը սերմեր է
շպրտում վրաս:
Սերմերը աճում են
Կամ սահում ու կորչում քամու
հետ:
Ձուր աչքերս խամրում են,
Ու ես աստղերին եմ խնդրում,
Որ նրանք գրառեն
Անզգամ քամիների
պարկեշտությունը:
Ասպետիս ուղարկեցի
անմահական խնձորի հետևից,
Ճանապարհին հրեշավոր
փերիները
Նրան խնձորի տեղ դրին ու
կերան:
Հույսը մնացել է երկնքից վերև,
Խելացի ու բարեպաշտ հողի
ճիչերին նախանձելով՝
Փախա շոյանքներից բոլոր
կոպիտ ձևերի,
Քառապատկվեց կարծրությունս,
Կոտրված թրի պես շպրտվեցի:

***

Աշնան խաշամը
ծափողջույններով
Ուղեկցում է ինձ:
Իմ գտած ու չկորցրած
ասպետների,

Ծանոթ ու անծանոթ անցորդների
աչքերից
Մոմի լույսեր հավաքելով՝
Մոտեցել եմ վանքիս դռանը
Ու խնկաբույրը հողոտ ծոցիկիս
Խնամքով պահում եմ նեղ օրերի
համար,
Իմ գտած ու չկորցրած
ասպետների համար:

ՀԱՐԱԶԱՏ ՍԵՂԱՆ

Որքան շատ ուզեցի քանդակել քեզ,
Իմ հարազա՛տ սեղան,
Քո երեսին ու նույնիսկ սրտին քո
Ուզեցի կնիքել աշխարհի ամենագեղեցիկ նախշերը,
Այո, սիրելի՛ս, դու սիրտ ես դարձել ինձ համար,
Որովհետև ամեն անգամ գամում
ես ինձ
Ու կապում ես սիրտս քո սրտին,
Եվ ասես թե մենք միասին մի
սիրտ դառած՝
Թռչում ենք ու գիշերը կես ենք
անում միասին:
Էլի հրաշալի է աշխարհը,
Էլի տարվում եմ առատ լույսերով
Ու էլի չեմ հասցնում քեզ
գեղեցկացնել,
Որովհետև գալիս է
ամենահարազատ ընկերս,
Ու խլում է ինձ քեզանից,
Իմ գրիչը, որ փոխվում է անընդհատ մատներիս մեջ,
Բայց էլի նույնն է, նա էլի իմ սերն է,
Ու խլում է ինձ ամեն ինչից,
Որ ավելի շատ մոտեցնի ինձ
Աստծուն:

***

Զգեստներս էլ բաժանեցի:
Գերագույն հաճույք է տաք հողի
մեջ թավալվելը:
Ոտքերդ հենց զգան
սառնությունս,
Կրա՛կ վառիր…
Պիտի արտասվեմ.
Պաղ քարին չեն տաքանում,
Կրա՛կ վառիր…

***

Անուրջներս բախվում են
հայացքների,
Շեմիս փշրվում են
մարգարիտները,
Մեկը որոնում է իր սեփական
խեցին,
Ուղիները չեն կտրվում հարվածներից սրի:

Անուրջներս բախվում են
հայացքների,
Մտնում եմ տունս, կրծքիս՝
գույներ հազար,
Ոգեղեն մի թռչուն խելակորույս,
Գույներն է ջնջում ծիածանի:

Խենթացել է այգիս իմ փոխարեն,
Անցո՛րդ, այգեմուտ է, անրջաքաղ,
Այգիս մեջքիդ արդեն խաս գոտի
է կապել,
Իջել է երկինքը, այգուս վերքն է
տարել:

***

Հիմա հենց այստեղ,
Այս լռության մեջ,
Իմ այս տարածքում
Ինձ համար ոչ մի ծաղիկ չի բացվում,
Մի մեղու հիմա նստել է մատիս,
Բզզում է անվերջ,
Բզզում է, բզզում…

***

Հենց մտածում եմ գոյությանդ
մասին՝
Որոտում է ներսս:
Քո խենթ ու խելառ,
Տեղատարափի համբույրներին
չտրված՝
Ես գիժ քամի եմ դառնում էլի քեզ
նման,
Հա՛մ գիժ, հա՛մ էլ սև մի քիչ,
Ու սկսում եմ պտույտս երկնքում,
Սկսում եմ սրբել երկրի երեսից
Ամեն կիսատ բան,
Ու հենց որ մի քիչ հանդարտվում
եմ ես,
Մազախռիվ գլուխս ձեռքերիս մեջ
առած,
Ողբում եմ մենակությունս
Ու սարսափում եմ. երկրի երեսին
Մի ոտնաչափ հող չմնաց
ինձ համար,
Որովհետև վաղուց, դեռ վաղուց
Հանձնվեցի հողին քո իսկ
կամքով,
Բայց մնացի երկնքում՝ սև քամի:

***

Կիտվող կարոտ, ձայնի թրթիռ
Եվ հոգեմաշ հեծեծանքներ,
Մի արահետ՝ մի քիչ կանաչ,
Մի կտոր լույս՝ երկնքից կախ,
Քայլե՛ր, քայլե՛ր, քայլե՛ր ծածուկ,
Արտե՛ր, հերկե՛ր, գութանի մաճ,
Մի սրտդողած խելոք մաճկալ՝
Վես ճակատին հացի քրտինք,
Մի կտոր լույս՝ երկնքից կախ,
Ու նոր բացվող մի արահետ՝
Դեպի երկինք:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԶՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ



2024 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ցուցասրահում տեղի ունեցավ Մարտիրոս Սարյանի ջրաներկ գործերի ցուցահանդեսը: Այն իրականացվեց «Հայաստանի գույները» ջրաներկի միջազգային երկրորդ փառատոնի շրջանակներում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Գյումրու համայնքապետարանի, Arvesta Art-Tour ընկերության, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի և Հայաստանի ազգային պատկերասրահի համագործակցությամբ: Համադրողներն էին Ռուզան Սարյանը և Կարեն Բարսեղյանը:

Ջրաներկի տեխնիկայով Սարյանն աշխատել է ստեղծագործական տարբեր շրջաններում, նույնքան բազմազան և անկրկնելի, որքան և յուղաներկով: 1904-1907 թթ. ջրաներկը նկարչի համար դարձավ այն հրաշալի միջոցը, որի օգտագործմամբ նա ձերբազատվեց ակադեմիական դպրոցի կաշկանդող կանոններից, դարչնագույն երանգների ճնշող մթնոլորտից, ծավալային ձևերի ծանրությունից: «1904 թվականից սկսած իմ գործերը ունեին ֆանտաստիկ բնույթ, – հիշում է նկարիչը: – Ինչ որ նկարում էի, ռեալության և երևակայության միահյուսումն էր, ռեալ՝ որքան որ այն կատարում էի տեսածի տպավորությամբ, ֆանտաստիկ՝ որքանով որ այն սինթեզում էի երևակայական տեսիլքի մեջ»: Թեթև, եթերային պատկերներ՝ հյուսված մարդկանց, կենդանիների, թռչունների, ծառերի ուրվանկարային կերպարներից, նույնքան թեթև, բայց բազմերանգ ներկապնակ. սրանք են այն հատկանիշները, որոնք բնորոշում են «Հեքիաթներ և երազներ» ջրանկարների շարքը: Կիրառելով ջրաներկի թաց տեխնիկան՝ երիտասարդ Սարյանը վարպետորեն արտահայտում է այնպիսի ներդաշնակություն, որը մեզ պարգևում է հրճվանքի աննկարագրելի ապրում: «Ծառի մոտ: Հեքիաթ», «Ծովի մոտ», «Գետի մոտ: Հեքիաթ», «Հեքիաթ: Երազ»՝ երեխային բնորոշ պարզությամբ օժտված այս գործերը, հիրավի, նկարչի երևակայական տեսիլքներն են, որոնք հնարավոր եղավ ներկայացնել 20-րդ դարասկզբին Մոսկվայում՝ երիտասարդ արվեստագետների շրջանակում լայն տարածում գտած սիմվոլիզմի համատեքստում: Սարյանի աշխատանքները, ինչպես նկատում էին քննադատները, ունեին վառ արտահայտված արևելյան բնույթ, վերարտադրում էին տեսած մի իրականություն, միաժամանակ զգացվում էր ինքնատիպ մի ոճի արձագանք: Այդ ամենը կապված էր նկարչի՝ Հայաստան կատարած այցելությունների հետ: Այստեղ՝ հայրենիքում նա տպավորվեց միջնադարյան մանրանկարչությամբ, գորգերի և խաչքարերի նախշազարդերով, ճարտարապետական կոթողների պարզ ու արտահայտիչ ձևերով և հարթաքանդարկներով:

Վաղ շրջանի ջրաներկ աշխատանքների շարքում առանձնանում են երկու դիմանկար՝ «Աղջկա գլխանկարը» և «Մոր դիմանկարը» (երկուսն էլ՝ 1904): Վրուբելյան ոգեշնչմամբ ստեղծված երիտասարդ աղջկա պատկերը թվում է անավարտ: Սակայն Սարյանին չեն հետաքրքրում բնորդուհու հագուստի մանրամասները, քանի որ նկարիչը զմայլված է նրա դիմագծերով, աչքերի խորությամբ, հույզերի նուրբ շարժումներով: Կարևոր է նկատել, որ դիմանկարի ողջ միջավայրը լուսավորված է, լույսը ուղղված չէ միայն աղջկա դեմքին, ինչպես ընդունված է ակադեմիական դիմանկարում, այլ ցրվում, տարածվում է նրա շուրջը: «Մոր դիմանկարը» զարմացնում է կարծես հուշերի խորքից հառնող հարազատ դիմագծերի գրեթե աննշմարելի, բայց արտահայտիչ և դիպուկ պատկերմամբ:

Ջրաներկն ավելի թավ հնչողություն և նյութական շոշափելիություն է ձեռք բերում չոր տեխնիկայի կիրառմամբ ստեղծված «Ծաղիկներ» (1912), «Ծաղկման» (1913), «Պարսկական տնակ» (1913), ինչպես նաև «Հայկական պար» (1915) աշխատանքներում: «Ծաղիկներ»-ում դեղինով արված մեծ ծաղիկներն ու երիցուկների մանր միջուկները հաղորդում են ջերմ արևի լուսավորությունը, վարդագույն և մանուշակագույն երանգներն՝ ամբողջացնում ծաղկեփնջի ձևը, իսկ սպիտակներն ու կապույտները՝ ծնում թեթևության և օդի շարժման զգացում: «Ծաղկման»-ում ուշադրություն է գրավում նրբությամբ կատարված կապույտ նախշազարդը, մինչդեռ ծաղիկները շատ վառ չեն, սակայն թեթև ու թարմ՝ կանաչ տերևների շնորհիվ: «Պարսկական տնակ» աշխատանքում Սարյանը վարպետորեն կառուցում է նկարի տարածությունը՝ համադրելով տարբեր չափսերի ծառերն ու նրանց միջև տեղադրված ծաղկած թուփը: Խորհրդավոր հեռավորության մեջ երևում է շագանակագույնով պատկերված գողտրիկ տնակը, որի ներքևի հատվածին և տանիքին դիպչում են արևի դեղնավուն շողերը՝ թեթևություն և լուսավորություն հաղորդելով հետին պլանին: Բոլորովին այլ է «Հայկական պար» ջրանկարի տրամադրությունը, որն արտահայտվում է միագույն սև ջրաներկով: Հարսանյաց զույգի, երաժիշտների, նոճիների և Մասիսի պատկերները կուռ են, թախիծով լի՝ ստեղծման տարեթվին համապատասխան: Սակայն Սարյանն իրեն բնորոշ կենսահաստատ ոգով թեթևացնում է սև երանգները և, թղթի սպիտակին չդիպչելով, պատկերում հարսի փեշի ազգագրական նախշերը, նրա քողը, նոճիների սաղարթների լուսաստվերը, զուռնա-դհոլը և Մասիսի բարձունքին նստած ձյունը: Հայ ժողովուրդը պետք է ապրի, իսկ ապրել նշանակում է սիրել, պարել, ընտանիք կազմել, կյանք տալ նոր սերնդին:

«Ն. Խեյֆեցի դիմանկարը» (1921) ջրաներկի չոր և թաց տեխնիկաների համատեղ օգտագործման զարմանալի արտահայտիչ օրինակ է: Պատկերելով տվյալ անհատին, որի անունը մեզ շատ բան չի հուշում, նկարիչը նրա ինքնամփոփ հայացքի միջոցով ներկայացնում է ժամանակը, դրա հետ կապված մարդու ապրումները, մտորումները՝ սոցիալիստական հեղափոխություն իրականացրած աշխարհում առաջին երկրի ճակատագրի մասին: Երիտասարդի դիմագծերը, հոնքերը, մազերը, օձիքը պատկերված են բարակ, գծագրական ճշգրիտ վրձնահարվածներով: Միաժամանակ դեմքի ծավալները և լույսուստվերի խաղը փոխանցվում են վարդագույնի և կապույտի նուրբ երանգներով:

Ջրաներկը համադրելով տուշին, մատիտին՝ Սարյանը կատարել է նաև ցուցահանդեսում ընդգրկված տարբեր էսքիզները: Դրանք են Հայաստանի առաջին պետական թատրոնի վարագույրի, Ա. Իսահակյանի «Բանաստեղծություններ» գրքի շապիկի, «Հուրի Փերի» հայկական հեքիաթի նկարազարդման, ինչպես նաև Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ձևավորման էսքիզները: Վերջիններս Վարպետի արվեստի գլուխգործոցներից են: Ինչպես գիտենք, Սարյանն ակտիվ մասնակցություն է բերել Օպերայի ստեղծմանը: Նա խորհուրդ է տվել Ա. Սպենդիարյանին ուսումնասիրել Հովհաննես Թումանյանի պոեմները՝ օպերա ստեղծելու նպատակով: Կոմպոզիտորին ոգևորել է այդ գաղափարը, քանի որ համահունչ էր նրա ստեղծագործական ծրագրերին: Անձամբ ծանոթանալով հայ մեծ բանաստեղծի հետ՝ Ա. Սպենդիարյանը կանգ է առել «Թմկաբերդի առումը» պոեմի վրա: Ինչպես հիշում է Նվարդ Թումանյանը /Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ, Եր., 1987, էջ 154/, հոր ցանկությամբ օպերան պետք է կոչվեր «Գոհար»՝ իշխանուհու անունով: Սակայն Սպենդիարյանը բացատրել է, որ ռուսերեն տարբերակում «ո» և «ա» ձայնավորների հերթականությունը խանգարում է երաժշտություն գրելիս: Ուստի «Գոհար» անունը փոխարինվել է «Ալմաստ» անվամբ, որն իր իմաստով մոտ է: Օպերայի ձևավորմանը Սարյանը անդրադարձել է երեք անգամ: Վերջնական տարբերակը անցել է որոնումների և փորձերի երկար ճանապարհ: Նկարիչը ուսումնասիրել է հայ ճարտարապետությունը, տարազները, ազգագրությունն ու ավանդները և իր ձևավորումներում ներկայացրել հայոց պատմական անցյալը ամենայն հավաստիությամբ: Ցուցահանդեսում ներկայացված զգեստների ու III ակտի հետվարագույրի էսքիզներով են ստեղծվել 1939 թվականին՝ Հայ արվեստի տասնօրյակին, Մոսկվայի Մեծ թատրոնում կայացած բեմականացման ձևավորումները: «Ալմաստ» օպերայի ձևավորման համար 1941 թվականին Սարյանն արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Առանձին շարք են կազմում 1944 թվականի «Գարնանային բնանկար Ռուսաստանում», «Մշուշապատ առավոտ», «Վաղ գարնանային բնանկար Ռուսաստանում» ջրանկարները: Դրանք կատարված են պատերազմի շրջանում, ավելի ճիշտ՝ Կիևի ազատագրումից հետո, երբ արդեն պարզ դարձավ, որ հաղթանակը մոտ է: 1943-ի վերջում Սարյանը կնոջ հետ մեկնել էր Մոսկվա, իսկ 1944-ի փետրվարին վերջապես հանդիպել իր որդուն՝ Ղազարոսին, որը մի քանի օրով եկել էր ռազմաճակատից՝ մասնակցելու Հարավարևմտյան ֆրոնտի երաժշտական անսամբլների մրցույթին: Մաքուր ջրաներկի թաց տեխնիկայի կիրառմամբ արված այս գործերում նրբագույն երանգներով պատկերված է վաղ գարունը՝ ձնհալից հետո արթնացող բնությունը: Այդպես հետզհետե արթնանում էր նկարչի հոգին՝ որդու մասին անհանգստությունից, անտրտունջ տառապանքից, սպասումից, նաև՝ ֆիզիկական հյուծվածությունից հետո: Եվ, իրոք, գարունն այդ տարի յուրահատուկ կսկիծով էր համակված: Ջարմանալի թարմ է պահպանվել այս գործերի ներկապնակը: Սարյանը, հմտորեն տիրապետելով տվյալ նկարչական տեխնիկայի գաղտնիքներին, հիանալի ճիշտ էր գնահատում յուրաքանչյուր երանգի ուժը:

Մարտիրոս Սարյանի ջրաներկ աշխատանքների ցուցահանդեսը նշանակալից էր Գյումրու մշակութային կյանքում, ինչպես նաև «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի 2020 թվականին բացված նոր ցուցասրահի հանրահռչակման համար: Հայաստանի Հանրապետության նորանկախ պատմության ընթացքում Մարտիրոս Սարյանի աշխատանքները առաջին անգամ ցուցադրվեցին Գյումրում. 20 աշխատանք ներկայացվել էր Մ. Սարյանի տուն-թանգարանից, 9 ջրաներկ և 4 քանդակ էլ՝ Հայաստանի ազգային պատկերասրահից: Ցուցահանդեսը դիտեց 2000-ից ավել այցելու:

Սոֆյա ՍԱՐՅԱՆ
արվեստաբան,
Մ. Սարյանի տուն-թանգարանի
գլխավոր ֆոնդապահ

Ամերիկաբնակ գյումրեցի դրամատուրգ, գրականագետ, թարգմանիչ Մարո Մադոյան-Ալաջաջյանի դրամատիկ կատակերգությունը ներկայացնում է Հոլիվուդ (Լոս Անջելես) քաղաքում գործող մեծահասակների ցերեկային խնամքի կենտրոնի առօրյան:

Խնամարկյալները ութսունից հարյուր տարեկան հայ մեծահասակներ են, որոնք անցել են կյանքի տարբեր ճանապարհներ և այսօր, ծերացած ու մոլորուն, չհիշելով իրենց ապրած կյանքից գրեթե ոչինչ, ձգտում են ապրել չապրածը, վայելել կյանքը, քանի դեռ ապրում են:

Դեմենցիայով տառապող այս մարդկանց հոգեկան ապրումների, կարոտի, վերջին խաղաղ հանգրվանի որոնման ողբերգությունն է թատերգությունում…

ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԽԱՂ

Երկու արարից բաղկացած այս թատերախաղը կառուցվածքով համապատասխանում է ժանրի բնութագրմանը: Գործողությունները կատարվում են արդի ժամանակաշրջանում: Գործող անձինք հանդես են գալիս մեծահասակների ցերեկային խնամքի կենտրոնի միջավայրում: Խնամարկյալները յոթանասունից հարյուր տարեկան հայ տղամարդիկ և կանայք են:

Համապատասխան միջավայր և մթնոլորտ ստեղծվում և ապահովվում են ինչպես հեղինակային նշագրումներով (ռեմարկ), այնպես էլ դիպուկ երկխոսություններով, դիտողություններով և ներքին խոսքերով: Տիպական հանգամանքները, որոնցում բացահայտվում են հոգեբանական դրությունները, գեղարվեստական առումով պատշաճ են և հաջողված:

Պիեսի վերնագիրը խոհական է, խոսուն: Հեղինակը հմտորեն գործածել է բառի բազմիմաստության հատկանիշը «ապրել» բայի՝ հանրությանը հայտնի երկու իմաստներով: Այս ձևակերպումը դառնում է ուղերձ և բանալի. նրանով են բացահայտվում այս կենտրոնում միմյանց գտած մարդկանց՝ ապրելու վայելքի մասին պատկերացումները, նաև ձգտումները, չապրված զգացմունքների ցավը, չասված խոսքերն ի վերջո արտահայտելու բերկրանքը և կարոտը, անթարգմանելի կարոտը.... ամեն ինչի հանդեպ...

Նինայի շուրթերից այս ուղերձը հնչում է միանգամայն բնական: Նա դեռ միջին հասակի կին է, ավյունով լեցուն է և այդ կենտրոնի տնօրենն է, և պարզ է, որ բեմի երբեմնի «թագուհի» իր քրոջը, որը երիտասարդական հմայք ունի (չնայած յոթանասուն տարեկան է), պետք է հորդորի. «Մարդը միշտ պետք է ապրի, հասկանո՞ւմ ես, քանի դեռ ապրում է»: Մելանյայի՝ «Լսի՛ր, հո դու փիլիսոփա չես» հարցին պատասխանելով՝ նա բացահայտում է այդ «փիլիսոփայության» ակունքը. «Բա ի՞նչ եմ, որ փիլիսոփա չեմ: Արի՛ մի քանի օր շփվիր մեր ծերերի հետ և չես զգա, թե ինչպես ինքդ էլ կսկսես փիլիսոփայել»:

Ստեղծագործության վերնագիրը, գործողությունների ծավալման միջավայրը, գործող անձանց հասակը և ուղեկցող այլ հանգամանքներ կանխակարծիք են ստեղծում, որ ներկայացվելու է մերձավորներից լքված լինելու կամ ակամա տարագրված լինելու ցավից ծնված հոգեբանական դրամա, որը, պարզ է, ուղեկցվում է խոսքի և դրության կոմիզմի դրսևորումներով: Սակայն դեպքերի զարգացումը, հեղինակային նշագրումները, խոհերը հերքում են այդ տպավորությունը. կա բարեկեցություն, խնամքը և խնամվածությունն անթաքույց են, կա ընտանիք, որ հոգում է իր մեծահասակին: Եվ հայացքներս այս դեպքում ուղղելու ենք դեպի անձի ներաշխարհ...

Այնտեղ՝ հուզաշխարհում էլ, իրոք, ծավալվում են ապրելու և ապրելո՛ւ բախումները:

Քաղաքակրթությունների խաչուղում հայտնված Մելանյան, որ բեմի «թագուհի» է եղել և իր ծննդյան տարեդարձների շքեղ տոնախմբությունների տիրուհի, այսօր՝ հոբելյանական յոթանասունամյակի օրը, մենակ է, նա միայնակ է դիմավորում այս օրը, և նրա հենարանը դարձյա՛լ ամուսինն է, ստույգ՝ մահացած ամուսնու լուսանկարը...

Որդին չի եկել. ծաղկեփունջ է ուղարկել նրա ամերիկացի կինը. նրանք հանգստի օր են անցկացնում ջրի ափին: Կարո՞ղ էին օրը փոխել: Գուցե: Մոռացե՞լ է որդին, որ այս տարին հոբելյանական է: Ի՞նչ է սա. սերունդների՞, թե՞ քաղաքակրթությունների տարամետություն, թե՞ և՛ այս, և՛ այն, գուցե օտարո՞ւմ է ազգային բարքուվարքից, ընտանեկան ավանդույթներից... Գուցե: Ինքը՝ Մելանյան, նպաստե՞լ է ընտանեկան սովորույթներից, ազգային նիստուկացից հեռացմանը: Երեսուն տարի առաջ է եկել հայրենիքից այս մեծ աշխարհ. որդին Ջերի է կոչվում, ինքը «Աստվա՜ծ իմ» ասելու փոխարեն նախ՝ OMG է ասում, հուզվում է «Տիտանիկ» ֆիլմի երգից, բայց նաև հիշում են «մամայի փախլավան», Հայաստանի Անկախության օրվա առթիվ հագած բեմական զգեստը և այլն:

Պիեսի հեղինակը հոգեվերլուծություն է կատարում. նոր աշխարհում տեղ պիտի ապահովեին, իսկ հի՞նը. հինն իրենցն է: Սակայն աննկատելիորեն հեռանում են...

Իրականության, ներաշխարհների բացահայտման առումով խիստ բնորոշ է Մելանյայի և դստեր՝ Սիլվայի զրույցը: Քառասունհինգ տարեկան է Սիլվան, բժշկությունը նրա «կյանքի գործն» է, նա չի մտածում ընտանիք ունենալու մասին և հանդուգն ձևով մորը պատասխանում է. «Այո՛, իմ կյանքն է, ոնց ուզեմ, այնպես էլ պետք է ապրեմ»: Գործողությունների զարգացման հետագա ընթացքը, սակայն, բացահայտում է, որ ծնողի, ընտանիքի, ավանդույթի հանդեպ պատասխանատվության բացակայությունից չէ, որ դուստրն այդպես է խոսում մոր հետ: Այստեղ առկա է հոգու խոր ցավ, որ ողջ կյանքում ուղեկցել է նրան՝ մանուկ հասակից:

Մարդուն երջանկություն են պարգևում նվիրումը, կենսաշնորհ սերը, իրեն անփոխարինելի համարող մարդու ներկայությունը: Երեխայի համար դա նախ՝ մայրն է: Հայ երեխան մեծանում է ա՛յդ գիտակցությամբ. ինքը ծնողների կյանքն է, մինչդեռ Սիլվայի ականջներում հիմա էլ հնչում են մոր խոսքերը. «Լսո՛ն, ես պատրաստ եմ ամեն ինչից հրաժարվելու հանուն իմ արվեստի»: Նա այդպես է պատասխանել նաև Սիլվայի «պաղատական հայացքին՝ առանց մազաչափ անգամ տատանվելու»: Կենտրոն գալուց հետո էլ Մելանյան նույն ամենաուրացությամբ վերսկսեց իր արվեստով պարապելը՝ ժամանակ չգտնելով երեխաներին իսկ հանդիպելու: Այս հանգամանքները ձևավորում են հոգեբանական բազմածավալ մի մթնոլորտ, որից ակներև է դառնում, որ Մելանյան «ապրում է, քանի դեռ ապրում է» և ունի ապրելու իրավունքի իր ընկալումները: Այսպես է մեծ, անձնուրաց նվիրումը, «կյանքի գործը» անջրպետում են անձին մնացյալ ամենից… Մելանյան Հայկին չէր ներել, սակայն իր փառավոր վերելքը չխոչընդոտելու համար իրեն լքած Հայկին, որը Ղարաբաղում ոտքն էր կորցրել, այժմ ներեց…

Ապրելու իրավունքն այլ ձևով են ընկալում խնամարկյալները: Որքան հողածինը մոտենում է հողին, այնքան մեծանում է կյանքի սերը, որքան էլ մոլորուն ու մտացրիվ՝ մարդն ափսոսում է չապրածի՛ համար, ի՛ր համար չապրածի: Ողջ կյանքում անհաշիվ գումարներ շորթած Սաթիկը մի կերպ եկել հասել է Ամերիկա. անձնական և հասարակական հանգամանքները դժբախտություն են բերել նրան՝ հոգին ծանրաբեռնելով մեղքերով, և այսօր մտապատրանքների մեջ տառապում է, ո՞ւր են այն մարդիկ, ովքեր օգտվել են իր աշխատանքից: Ինչո՞ւ չի ապրել ինքը իր ուզած կյանքով: Նա չի էլ կարող հեռանալ այս աշխարհից. ձգտում է ապրել, քանի դեռ ապրում է: Նրա ապրելու վայելքը երգելու մեջ էր: Եվ Սաթիկը երգեց իր երգը մեռնող կարապին վայել ապշեցուցիչ կատարելությամբ; Որքա՜ն տարբեր են հեռանում մարդիկ այս աշխարհից:

Վարպետորեն է ներկայացվում հոգու հեռաստաններում ամփոփված ողբերգությունը. գուցե այլ ճանապարհ անցներ Սաթիկը, եթե հայրը չխոչընդոտեր: Ուշադրության արժանի մի հանգամանք. նա չի մեղադրում հայրիկին, չի տրտնջում, բարի է հիշում իրեն երգել արգելած հորը: Սա նկատելի է պիեսի հյուսվածքում ընդհանրապես: Ընդգծվում են հայ ընտանիքի առանձնահատկությունները, բարոյական նորմերի պահպանությունն ու պատասխանատվությունը դրանց հանդեպ. զավակները խնամքոտ հոգածությամբ են վերաբերվում ամեն ինչ մոռացած, մոռացող, տարտամ մտքով իրենց ծնողներին, սակայն ծնողներն էլ պատասխանատվություն են կրում զավակների հանդեպ:

Այս իմաստով շատ հետաքրքրական են Աննայի և Ստեփանի փոխհարաբերությունները պատկերող դրվագները, հատկապես՝ «հատուկ թերապիայի»՝ «մի փոքր մոլորված, բթացած վիճակի մեջ»՝ նրանք, սակայն, ձգտում են միմյանց և հորդորում հետևել առողջությանը, որպեսզի ճաշակեն այն ամենը, ինչ դեռ չեն տեսել: Հրաշալի է ներկայացնում հեղինակը կենսասիրության բռնկումը ամեն ինչ մոռացության անդունդը գցած այս ծերունիների մեջ (Աննա) «-Հա՛, ապրելու և տեսնելու եմ, հաստա՛տ, մինչև մեռնելս պիտի ապրեմ, բա ո՞նց»: Ի դեպ՝ այս դրվագները դրության ու խոսքի կոմիզմի փայլուն, բացառիկ հաջողված օրինակներ են, որոնց զորեղացմանը նպաստում են բուժքույր Լյուդայի, նարդի խաղացողների և այլոց ակնարկներն ու համապատասխան վերաբերմունքը: Սակայն ընդհանուր այս տեսարաններում և փոխհարաբերություններում հեղինակն ընդգծում և ուշադրության կենտրոնում է պահում կարևորագույն մի հարց՝ դրսևորած վարքագծի համար զավակների հանդեպ պատասխանատվությունը: Լյուդան ահաբեկում է, թե կտեղեկացնի Աննայի դստերը և Ստեփանի որդուն: Ընդգծվում է հայ ընտանիքի տիպի գաղափարը՝ և՛ ծնողապաշտ, և՛ զավակապաշտ՝ հազարամյակներ շարունակ ազգ պահող հայ ընտանիքի տիպար:

Պիեսում ընդգծուն կերպով երևում է, որ ազգությամբ հայ բոլոր խնամարկյալներն էլ զգում են ընտանիքի, զավակների հանդեպ այդ պատասխանատվությունը, այդ թվում՝ իրանահայ Հրանտը, որի մասին խոսելով՝ նարդի խաղացողները նաև իրենց կարծիքն են հայտնում. «Հրանտն էլ նրան (Կարմենին) չէր ասել, որ հասուն երեխաներ ու թոռներ ունի, որոնցից ամաչում է». չէ՞ որ նա արդեն յոթանասունյոթ տարեկան է:

Նուրբ դիտողականությամբ, աննշմարելի չափով անգամ չդիպչելով ֆիլիպինցի Կարմենի ազգային արժանապատվությանը՝ Մադոյան-Ալաջաջյանը, այնուամենայնիվ, նման հարցի առջև նրան չի կանգնեցնում: Սակայն դույզն-ինչ նրա կանացի հպարտությունը կասկածի տակ չի առնում, ընդհակառակը, նա խնամված է, գեղեցիկ հագնված, հաճելի արտաքին ունի՝ չնայած հասակին (ութսունինը տարեկան է): Նա տենդագին հայերեն է սովորում. դա նրա սիրո՛ լեզուն է, հարգում է իր սիրո առարկային, նրա մահացած կնոջ հիշատակը: Բայց Հրանտը ինչո՞ւ է մեռած ձևանում. «Սիրելի՛ս, ապրի՛ր, քանի դեռ ողջ ես»:

Զգացմունքի, հույզի, հեղինակային նպատակադրման արտահայտման տեսակետից բարձունք է Կարմենի խոսքը: Նա այլևս հաշտ չի կարող ապրել իր հասակի հետ. նա ի սեր խենթացյալ է… Նրա ըմբոստացումը գրավիչ է: Մի՞թե քրիստոնյաների Աստվածը մեղք կհամարի սերը: Իսկ եթե՝ այո, ուրեմն՛ «Իսկ դու Աստվա՛ծ չես, ինչո՞ւ ես իմ… մեր սերը մեղք համարում»: Նրա խոսքի նկատելի դինամիզմը, այո՛, հաստատում է, որ ժամանակ չի մնացել. «Մենք՝ այստեղ հավաքվածներս, գնալու ենք… հերթով»: «Տերևաթափի՞» ժամանակներ են, ուստի «Քանի դեռ ապրում ենք, պետք է ապրենք…»:

Իրականում ութսունից հարյուր տարեկան այս բոլոր խնամարկյալներն էլ դեմենցիա ունեն. բոլորն էլ գնալու են… հերթով…

Հետաքրքիր կերպար է Հրանտը. ինքը գրել շա՜տ է սիրում, ուստի «բանաստեղծություն» է գրում՝ պարզամիտ մի շարադրանք՝ «-Մենք պիտի ապրենք, քանի որ ապրում ենք, քանի որ սաղ ենք… Կարծես որ մեր գրպանի մեջ բոմբ կա, որ կպայթի ամեն վայրկյան» և այլն:

Նույնպիսի «արվեստով» նա քաղաքական «բանաստեղծություններ» է գրում, երբեք հայրենիքում չեղած, ոչ մի անգամ Հայաստան չգնացած մարդը դատողություններ է անում Հայաստանի քաղաքական կացության մասին, Հայաստանի՝ դեպի Եվրոպա միտվածության մասին:

Այս ամենը խիստ բնորոշ է, տիպական, նրա կերպարը խտացված է: Հրանտը մյուս բոլոր խնամարկյալների նման վախենում է հաջորդ իսկ վայրկյանին մոռանալ ասելիքը, սակայն չի մոռանում հեռավար դասեր տալ հայրենաբնակ հայրենակիցներին, նա, որ տարրական տեղեկություն հայրենիքի մասին չունի և Հայաստան մեկնելու գաղափարը քննարկելով՝ հարցնում է, թե «Հայաստան թուղթ, խոտքար ու մատիտ կա՞», որ ինքը Կարմենի մասին բանաստեղծություն գրի…

Պիեսի կատակերգական տարրերը կառուցված են նուրբ, երբեմն ընդգծված հումորով, սակայն, իհարկե, ծաղրը չկա:

Հայաստան գնալու և հայրենիք վերադառնալու թեմաները պիեսում դառնում են գլխավոր գաղափարներ: Սաթիկի՝ մեկ անգամ էլ Սևանը, իրենց տունն ու թթենին տեսնելու երազանքն է տեղիք տալիս նրան քննադատելու, որ հավանաբար Սաթիկը մոռացել է մերձավորների գերեզմանների տեղը: Սակայն մի՞թե միայն Սաթիկը… Եվ իզուր է Հրանտը դառնորեն հեգնում, թե Հայաստանի մարդիկ լավ թաղում անել գիտեն, թե շիրիմապաշտ են. իրենք՝ օտար քաղաքակրթությունը «վայելողները» ևս ուզում են հանգչել հայրենի հողում… Ինչո՞ւ:

Հրանտն ակնարկում է Վարդանանց պատերազմի զոհերի, ապա Սարդարապատի հերոսամարտի շիրիմների մասին և ապա՝ «Եթե բոլոր ճակատամարտերու հերոսներու շիրիմները գտնենք և դուրսի բոլոր հերոսներուն շիրիմներն ալ Հայաստան փոխադրենք, կունենանք աղվոր երկիր-գերեզմանոց-թանգարան» և սրանով «աշխարհի մեջ պետք է մե հատ ըլնենք՝ երկի՜ր-գերեզմանո՜ց-թանգարա՜ն» (Սակայն ինքը սիրո երգ գրելու համար է գնում Հայաստան):

Մելանյան սա կծու կատակ է համարում: Այո, կծու է, այդպիսին է, որովհետև իրենք բոլորն էլ ապրելիս այդ մասին բնավ չեն խորհել, վկա՝ Սաթիկի թոռան՝ Ռիչարդի զարմանքը տատիկի՝ Հայաստանո՛ւմ հանգիստն առնելու երազանքի առթիվ: Նա երբեք չի զգացել տատիկի կարոտը և կարծում է, որ «մեր երազած վայրերում պետք է լինենք, քանի դեռ ապրում ենք, այլ ոչ թե մահանալուց հետո»: Մինչդեռ ինչ իմանաս՝ ինչն էր ստիպում Աննայի դստերը երանելի համարել մոռանալը, ամեն ինչ մոռանալը…

Մտորումների այս պիեսը (այսպես կբնութագրեի) խնամարկյալների կյանքի ուրվագծի, այսօրեական դրսևորումների խորքի վրա բացահայտում է անձնական ապրումների, տառապանքների ուրույն մի աշխարհ, ուր ընդհանուր մի բան կա՝ երբ նվազում է մտքի հսկողությունը, սիրտն ավելի պահանջկոտ է դառնում, ազատվում է ընդունված օրինականության կապանքներից, և բնությամբ տրվածը դառնում է անթաքույց: Այս դեպքում մարդը որոնում է ի՛ր փրկության տապանը: Այդպես ստեղծվեց բազմալեզու երգչախումբը, ուր յուրաքանչյուրն ի՛ր երգն էր երգում, և ամուսնու անվայելուչ պահվածքից վրդովված Լյուդային խորհուրդ տվեցին, որ նա էլ իր լեզվով իր մանկության երգերից մեկը երգի՝ իբրև ամոքում… Իբրև հոգևոր հայրենիք:

Եվ վերջում… Եթե ուզում էին սիրո երգը գրել, գնացին Հայաստան, եթե մնացած կյանքը պիտի ապրեին, քանի դեռ ապրում են, հայրենի՛ք գնացին, եթե իրենց «կյանքի գործն» (Սիլվա) են ուզում անել, պիտի հայրենի՛ք գնան, հավերժական նինջը Հայաստանո՛ւմ պիտի գտնեն, որ հանգստաբեր սաղմոսը Սևանը մրմնջա, որ դեպի բարձունք իրենց Արարատը տանի: Որպեսզի տո՛ւն ունենային, հայրենի՛ք գնացին ու պիտի գնան, որովհետև (դասականն էլ է կարծում). «Հողին վրա ուրիշին տունը, որ դուն շինեցիր, հող է միայն, քար ու կիր… Ու հողին մեջ ուրիշին քու ոսկորներդ անտեր ցուրտեն հավետ կմընսին…»: Դա բազմահմուտ հեղինակը ցույց է տվել և՛ տիպականացված լեզվով, և՛ ընդհանրացված կերպարներով, և՛ պատճառաբանված գործողություններով:

Մարիետա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

«ԼՈՒՅՍԸ ՀՈՂԻՑ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ» ԱՐԱ ԱՐԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Օրերս «Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի» սրահում տեղի ունեցավ «Լույսը հողից է բարձրանում» խորագրով հուշ-ցերեկույթ՝ նվիրված բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Արա Արթյանի հիշատակին: Միջոցառումը կազմակերպվել էր Գյումրու «Մի սար» ԿՄԲՀԿ նախագահ Արևիկ Թանաշեանի նախաձեռնությամբ, Գյումրու համայնքապետարանի աջակցությամբ և Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի մասնակցությամբ:

Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, բանաստեղծուհիներ Ռոզա Հովհաննիսյանը, Սոնա Անտոնյանը խոսեցին Արա Արթյան գրողի, մարդու և մտավորականի բարձր որակների, «Լույսը հողից է բարձրանում» գրքի տպագրության կարևորության մասին, նաև՝ թե որքան սերունդներ են կրթվել գրողի՝ բառի հանդեպ բացառիկ պատասխանատու, բծախնդիր վերաբերմունքով: Խոսքը համեմեցին ջերմ հուշերով:

Գրքի մասին գրականագիտական-վերլուծական խոսքով հանդես եկավ բան. գիտ. թեկն., դոցենտ Կարինե Մարտիրոսյանը:

Միջոցառումն առանձնանում էր գեղարվեստական լուծումներով. հնչեցին հեղինակի բանաստեղծությունները՝ թե՛ իր՝ գրողի ձայնով, թե՛ բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանի և թե՛ Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամի Գյումրու գրասենյակի պատասխանատու Արա Նախշքարյանի մշակմամբ, ով նաև գրքի շապիկի լուսանկարի հեղինակն է: Երաժշտական մասն ապահովեց «Մի սար» սիմֆոնիկ նվագախմբի ջութակահարուհի Հռիփսիմե Եղիկյանը, ելույթ ունեցավ նաև վաստակաշատ երաժիշտ Սաթիկ Վարդանյանը:

Առանձին ելույթներով հանդես եկան գրողի գրչընկերները, աշխատանքային ընկերները, նրա արվեստը գնահատող բազմաթիվ հյուրեր՝ «Դպիր» հրատարակչության տնօրեն, Շիրակ հայրենակցական միության անդամ Հովիկ Կարապետյանը, ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանը, հոգեբան Կարինե Սահակյանը և այլք:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ Արևիկ Թանաշեանը: Միջոցառմանը գործուն աջակցություն ցուցաբերելու համար նա իր նախագահած հասարակական կազմակերպության կողմից շնորհակալագրով պարգևատրեց «Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի» տնօրեն Ինգա Ավագյանին:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ գրողի կինը՝ արձակագիր Շնորհիկ Շահինյանը:

Հանդիպումը վարում էր Վիգեն Թանաշեանը:

ՆՈՒՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

«ԹԵ ԻՆՉՈՒ Է ԼՈՒՅՍԸ
ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ՀՈՂԻՑ...»

/Արա Արթյան, Լույսը հողից է բարձրանում, 2022 թ./

«Այո՛: Կգա օրը: Եվ վերջին անգամ կլինես թախծոտ...

...Դու կլսես մեռնող մայրամուտի տնքոց...

...Այնժամ կհասկանաս,

Թե ինչու ես քայլել դեպի հավերժը. այնժամ կհասկանաս,

Թե ինչու է լույս բարձրանում հողից...»:

Արա Արթյան

Մտորումների շավի՛ղը հավերժի ճամփորդի, և ինչպես նրա բառը՝ լույսն է, որ հողից է բարձրանում:

Համանուն ժողովածուն լույսով է շնչում, և սեփակա՛ն լույսով անմահության կամուրջ է կապում նաև գրողը:

«Կույս աղջիկների և կույս տղաների» ոգեցունց ուղերձներն է հղում հեղինակը՝ ասես դարերի հեռվից թովելով ծնունդի ու մահվան ճիշտ կենտրոնում հանդիպող: կյանքին: Այդպես և՛ ծովը, որ բարի է շատ, և՛ նրա խորքի կապույտ հեքիաթները, և՛ հոգու անսահման խորհրդավորությունը, որ միայն դեպի կործանում են տանում /«Կործանում»/: Եվ ցավ՝ բարության անտակ խորքում կործանումից՝ մինչև պատերազմի ցավ, ու բյուրածունկ բամբուկ, որ սփոփանքի մեն մի հնարավորություն ունի՝ ձեռքը՝ ցավից ծնկները փշրելու, այն էլ՝ անկարելի /«Անկարելին»/:

Ամենուր ասես մահվան ստվերն է թափառում. ինչ խոսք, գրքում գրողի մտորումների անկանգ պտույտը մի կետի շուրջն է՝ մարդկայնորեն ճշգրիտ և ճշմարիտ՝ զուգահեռը մարդու ծնունդի՝ մահն ու առավոտը՝ մի դեպքում՝ մահվան, մյուս դեպքում՝ մահվան սպասումի. «Փլվի՛ր, առավո՛տ, ծնկներիս, // ... // Մեռնում եմ, բայց թե իմ վերքը // Կփակի՞ վերքդ, առավո՛տ...»:

«Անտիպներում» թե «Հաղթանակի այբուբենում» ամենուր հաղթողը նա է՝ նորին մեծության մահը. ասես համազոր՝ լույսն ու մահը, իսկ զարմանալին այն է, որ լիովին բացակայում է լռությունը, և չկա անշարժ վիճակ. կա շրջապտույտ, կա թռիչք, կան գույներ, այն ամենը, ինչը կենսախնդության սերմն ունի ներսում, և կա բանաստեղծություն. «Եվ ջուրը լույս է ծնում, և հողը ծնում է աստղանավորդ»:

Մահին, այո, գուցե սա ի սկզբանե ունեցած զգացողություն-խլիրտն է, որ ակամա հայտնվում է ժամանակ առ ժամանակ, բայց՝ իր տեղում՝ ճիշտ լույսի ակնախտիղ հագեցումի պահին: Ապա և կյանքի ճանապարհի բանաձևն է, թե ինչպե՛ս կույրերը լայն ճանապարհ են բացում լայնաչ տեսանողի առջև՝ ի զարմանս համայնի՝ մատնացույց անելով աներեր ու զգուշավոր, վստահ քայլելու ճշմարիտ ուղին:

«Մեկիկ-մեկիկ ու թել առ թել // Ճերմակում են մեր մազերը, // Ո՞ւր է հույսը խարիսխ նետել, // Ո՞ր երակի մեջ է սերը»: Ամեն ինչ ճշմարտության չափ գեղեցիկ է հեղինակի սիրային՝ թե՛ բանաստեղծություններում, թե՛ գազելներում՝ ժողովրդական լեզվամտածողության զուգորդմամբ. «սերը-կանաչ իր աչքերով ծաղկող, ինչպես բարի եղինջ». էլի ծովն է անտակ, այս անգամ՝ սիրային խորխորատներով, էլի ձկնիկը ոսկե, ու էլի մենության կղզին՝ խաղաղված. «քանի որ դու միակ ծովն ես, սիրելի՛ս, // ուր ոչ ոք, ոչ ոք չի խեղդվում // ինձնից բացի», իսկ հետո՝ «վերմակը սահել է իմ թախծի վրայից // թախիծքար-վերմակ-մամուռ-եղջերու. // եղջերուն արածում է քո բարձի տակ... //... // ես անկարող եմ բացել դարպասներն արևի»: Ապա՝ «Ես չեմ եկել-ես ծնունդն եմ ու մահը քո, // լույս է հավետ-չկա գիշեր կամ երեկո, // մանուկ երազ, ձեռքս բռնած ո՞ւր ես տանում... // Եղջերուներ են արածում մեր բարձի տակ, // սերն ասում է՝ այժմ և միշտ իրար գտաք, // կայծակներն են այսպես հողում հանգստանում»:

Ծնունդից սկսյալ՝ մանկության հուշեր, սեր, մահվան մասին խոհեր. շղթան ամբողջանում է, գծվում է ճանապարհը մինչև վերջ՝ առանց ընդհատումի և երգով իհարկե, ինչպես գրողն է ասում, «երգը հրճվաթախիծ այն օրերի»: «Իմ թախիծը մի կամուրջ է, որից ոչ ոք ցած չի նետվում»,- ամփոփում է բանաստեղծը:

«Դրախտ իջա ես քիչ առաջ, // Լույսից բացի չկար ոչ ոք»: Նրա՝ դրախտի լույսն անգամ տեսանելի է այնպես, ինչպես լույսը այս-կողմյան աշխարհի: Իսկ կյանքի և մահվան խաչմերուկում բանաստեղծը ասես գոչում է. «Ծիծեռնակի խմած պուտմ ջրի նման կյանքս անցավ, // Ու ծովափնյա ավազների գրի նման կյանքս անցավ, // Ու թողնելով իմ մատների վրա գույն-գույն ալրափոշի՝ // Թիթեռների իրիկնային պարի նման կյանքս անցավ:

Բանաստեղծությունից բանաստեղծություն ձգվում է տողը նրա հոգու՝ մեկ որպես կապող օղակ, մեկ էլ որպես մտքի արձագանք՝ մի զուսպ ցասում. այդպես ամբողջ ժողովածուում:

Ուշագրավ են նրա ինքնահատուկ «ոսպնյակները» արևի տակ: Լույսի առանձնյակներով, սիրով, մահվան մասին խոհերով կրկին, բայց և՝ անշուշտ տարբեր՝ հար և նույն արթյանական ձեռագրով:

Ե՛վ քաղաքը «յոթնագմբեթ», և՛ տունը, որ տնքում է հսկա շենքի տակ, և՛ Արթեն պապը, որ «իր կորած երկիրն էր նստեցնում ծնկանը, ու ծունկը չէր ցավում», մի անգամ էլ, երբ արևի տակ գլխաբաց էր քնել, «Երկրի կարոտը արեգակ դարձավ ու գլխին զարկեց. այլ, մեկ ուրիշ ի՞նչ բառաշերտ պետք է որոնել-փնտրել, որ էրգիրն ու հայրենի հողի հարազատությունը այսպես զուսպ, բայց շողուն օծվի գրողի, ապա և՝ ընթերցողի շուրթերին: «Լացս մնում է վերելակի մեջ կծկված, // ինչպես շան մրսած քոթոթ, // որ ո՛չ ցած է իջնում, ո՛չ էլ ելնում է վեր»:

Ապա՝ ավարտը, իղձը գուցե բանաստեղծի. «Ու հանկարծ մի օր, թե ինձ հաջողվի // Ճակատագրիս ընթացքը բեկել, // Այն աշխարհ կերթամ ես այն նույն ճիչով, // Որով մի օր այս աշխարհ եմ եկել»:

Ի վերջո, որտե՞ղ է սպառվում նրա հոգու լույսը, և սպառվո՞ւմ է արդյոք. պատասխանը մեկն է՝ իր իսկ տողերում. «Իմ քաղաքի՛ առավոտ, քարի՛ վրա թխած հաց: // Իմ քաղաքի՛ առավոտ, իմ հարսնացո՛ւ լողացած, // Կաթիլները քո հնչուն իմ սրտխփոցն են ասես...»:

Եվ՝ առանձին շարքով նրա մանրակերտները՝ հիրավի անվանը համահունչ՝ մեծ խորքով ու ասելիքով, խոհափիլիսոփայական հենքով: Այսպես. «Դեպի գագաթ տանող // Արահետը կորավ // Թանձր մշուշի մեջ. // Եվ իմ սիրտը ասաց՝ // Ես եմ ճանապարհը»: Կյանքի մասին՝ լայն շրջագծով՝ ամենատարբեր դիտանկյուններից. «Ավարտեցի հունձքը, // Եվ իմ բառերն են հացե՝ խոսուն վերջաբանով:

Հիրավի վարարուն է նրա հունձքը, և բառը՝ անկրկնելի, բերրի է նրա լռությունն անգամ, ինչպես այն ինքնատիպ արարումը, որ թողեց որպես վառ հետագիծ՝ հայ պոեզիայի ուղեծրում՝ անշուշտ հաստատուն գրի արժեքով:

...«Ես հաղթանակի Արևածագն եմ, // Ես լսում եմ տնքոցը բոլոր-բոլոր արևածագերի, // որ ոռնացել են ցնծության // իմ արևածագը ծնելու համար»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Շիրակի երիտասարդները շարունակում են գրական ավանդույթները զարգացնել մեր ժամանակների ոգով: Տարբեր ժանրերում ստեղծագործողները կարողացան հանդես գալ ինքնատիպ ձեռագրով: Այս անգամ նրանք փայլեցին ՀԳՄ-ի նախաձեռնած «Մինչև 27 տարեկան երիտասարդ ստեղծագործողներ»-ի մրցանակաբաշխությունում՝

Ամալյա Ենգոյան -1-ին մրցանակ արձակի անվանակարգում

Անի Խաչատրյան-2-րդ մրցանակ՝ մանկագրություն անվանակարգում

Լևոն Բեժանյան-3-րդ մրցանակ պոեզիայի անվանակարգում

Սյուզաննա Գալստյան-խրախուսական մրցանակ արձակի անվանակարգում:

Սյուզաննա Գալստյանը վերջերս նաև 1-ին մրցանակի է արժանացել «Մշակույթի թելեր 2024» միջազգային մրցույթի էսսե անվանակարգում՝ ներկայացնելով «Մեծ աղոթասացը. Գրիգոր Նարեկացի» թեմայով էսսե: Մրցանակը նրան տվեց բացառիկ հնարավորություն՝ գործուղվելու Մոսկվայի արտասահմանյան գրականության գրադարան՝ վերապատրաստվելով որպես մշակույթի դեսպան:

Նոր նվաճումները ճանապարհին են, նոր ստեղծագործությունները՝ մտքերի թրծարաններում, իսկ ոգեշնչման աղբյուրները՝ ամենուրեք:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԾԱՂԿԱԾՈՐՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ծաղկածորյան վսեմ և միևնույն ժամանակ համեստ լեռների ու ձորերի արանքում ծվարած Գրողների տունը թերևս առաջին անգամ պիտի կրեր մեր ոտնահետքերը: Առաջին իսկ պահին, երբ մենք ոտք դրեցինք, մի տարօրինակ զգացում պատեց մեզ. տնից հեռու, բայց տանն էինք: Այս հոգեպարար զգացումը զանգի նման ղողանջում էր մեր մեջ այդ օրերի ընթացքում: Գերհագեցած, ստեղծագործական քննարկումներով լի առօրյան ակտիվ էր պահում գրական դաշտը: Մեզ ընձեռվել էր բացառիկ հնարավորություն՝ նույն հարկի տակ գտնվել ժամանակի գրական մեծերի հետ: Նրանց հետ մենք քննարկեցինք մեր գործերը, լսեցինք ու լսվեցինք, խորհուրդներ ստացանք: Ավագ սերունդը հաստատում էր, որ պատրաստ է լինելու մեր կողքին իր խորհուրդներով ու փորձով: Մեզ համար մեծ պատիվ էր լինել այդտեղ գրական հեղինակությունների հետ: Վստահաբար կարելի է ասել՝ երիտասարդ ստեղծագործողների ծաղկածորյան համաժողովը մեծ փորձառություն է մեզ՝ սկսնակներիս համար: Առողջ քննադատությունը, անհրաժեշտ խորհուրդներն այն են, ինչ պետք է լավ մեկնարկի համար:

Լիահույս ենք, որ հաջորդ տարի ևս բախտ կվիճակվի լինել Գրողների տան և իրական գրողների հովանու ներքո:

Սյուզաննա ԳԱԼՍՏՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ